

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ

2009 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

Համառոտ նկարագիր



ՏԱՐԱԾՔԸ (ՀՀ տարածքի 15.1%-ը).....	4506 քառ.կմ
ԲՆԱԿԶՈՒԹՅՈՒՆԸ(ՀՀ բնակչ.4.7%)	152.8 հազ. մարդ
որից քաղաքային.....	103.7 հազար մարդ
գյուղական	49.1 հազար մարդ
ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ	34 մարդ/կմ.ք.
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԹԻՎԸ	109
որից քաղաքային.....	7
գյուղական	102
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԹԻՎԸ	135
որից սահմանամերձ, լեռնային եւ բարձր լեռնային.....	105
ՍԱՀՄԱՆԻ ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ.....	472կմ
հրանի Իսլամական Հանրապետության հետ	42 կմ
Ադրբեջանի Հանրապետության հետ ...	382 կմ
(որից 110կմ-ը Նախիջեւանի ԻՀ հետ)	
ՄԱՐԶԿԵՆՏՐՈՆԸ.....	ք. Կապան

Սյունիքի մարզը հանդիսանում է հանրապետության խոշոր վարչատնտեսական միավորներից մեկը, զբաղեցնում է հանրապետության տարածքի շուրջ 15 տոկոսը և ունի աշխարհաքաղաքական և ռազմավարական նշանակության կարևորագույն դիրք:

Մարզին բնորոշ են բարձր գոտիականությունը (միջին բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է շուրջ 2200մ.) և կլիմայական տիպերի մեծ բազմազանությունը՝ մերձարևադարձայինից մինչև մերձբևեռային: Ամենաբարձր լեռնագագաթը Կապուտջուղն է՝ երկրորդը հանրապետությունում (3906մ), ամենացածր կետը ծովի մակերևույթից 375 մետր է (Մեղրիի տարածաշրջան). խոշոր գետերն են՝ Որոտանը, Ողջին, Մեղրին. բնական և արհեստական ջրավազաններից հայտնի են Կապույտ լիճը, Սև ջուր և Գյոլ-Գյոլ լճակները, Շամբի և Սպանդարյանի ջրամբարները:

Մարզն աչքի է ընկնում բուսական և կենդանական աշխարհի բացառիկ բազմազանությամբ, հարուստ է բնահումքային ռեսուրսներով, պատմամշակութային և բնական հուշարձաններով:

Հանրահայտ են Քաջարանի, Կապանի, Ագարակի, Դաստակերտի, Լիճքի, Սվարանցի մոլիբդենի, պղնձի, ոսկու և հազվագյուտ այլ մետաղների հանքավայրերը: Զգալի են բազալտի, մարմարի, կրի, կավի պաշարները, կան թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի մեծ տեսականի, հիդրոէներգետիկ մեծ ռեսուրսներ, բերրի սևահողեր, անտառներ և ալպյան մարգագետիններ:

Բնական հուշարձաններից հայտնի են Գորիսի և Խնձորեսկի «բուրգերն» ու քարայրերը , Շաքիի ջրվեժը (18մ)՝ Փոքր Կովկասի ամենաբարձր ջրվեժը, Որոտանի և Ողջիի կիրճերը, «Սատանի կամուրջը», Ծավի՝ աշխարհի ամենամեծ բնական սոսիների

ռելիկտային պուրակը (60 հա), Շիկահողի արգելոցը, «Զանգեզուր» արգելավայրը, «Արևիկ» ազգային պարկը, Մթնածորի անտառը:

Պատմամշակութային հուշարձաններից ամենահայտնիներից են Բաղաբերդի, Հալիձորի, Որոտնաբերդի ամրոցները, Տաթևի, Որոտնա, Բղենու վանքերը, Վահանավանքի և Երիցվանքի վանական համալիրները, Աղիտուի դամբարանային հուշարձանը, Սիսիանի նեոլիտի ժամանակաշրջանի դամբարանաբլուրը, Ջորաց քարերի հնագույն աստղադիտարանը, Մեղրի քաղաքի փոքր թաղի եկեղեցին և քաղաքի պաշտպանական նշանակության աշտարակները:

Մարզն ունենալով արտադրական մեծ ներուժ և հանդիսանալով հանրապետության ամենախոշոր վարչական և տնտեսական միավորներից մեկը, դեռևս մնում է համեմատաբար քիչ բնակեցված և տնտեսապես թույլ յուրացված, սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական լուրջ հիմնախնդիրներ ունեցող տարածաշրջաններից մեկը:

Մարզում առկա հիմնախնդիրներն առավելապես պայմանավորված են հետևյալ գործոններով.

- մայրաքաղաքից ունեցած մեծ հեռավորությունը և .տրանսպորտային հաղորդակցության այլընտրանքային միջոցների բացակայությունը.
- գործազրկության բարձր մակարդակը (այն մոտ 1.7 անգամ բարձր է հանրապետական միջին ցուցանիշից).
- սահմանամերձ, լեռնային, բարձր լեռնային, փախստականներով բնակեցված, սակավամարդ և սակավահող բնակավայրերի մեծ թիվը /80%/
- բնակչության ճնշող մեծամասնության ցածր եկամուտները.
- պատերազմական գործողությունների հետևանքով չլուծված զգալի խնդիրների առկայությունը.
- վերը նշված և առանձին այլ գործոններով պայմանավորված՝ կապիտալ ներդրումների դեռևս ոչ բավարար մակարդակը և այլն:

Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերն են (հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում նախնական տվյալներով կազմում են 14.0 և 7.6%): Բեռնափոխադրումները մարզում իրականացվել են բացառապես ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով:

Մարզի պետական միասնական գրանցամատյանում հաշվառված են 2820 իրավաբանական անձ և 3809 անհատ ձեռնարկատեր:

Մարզում հիմնականում առկա են անհրաժեշտ նախապայմաններ բազմաճյուղ տնտեսության կազմակերպման և զարգացման համար:

Մարզպետարանի գործունեության կազմակերպման ընդհանուր հարցեր

Պետական կառավարումը մարզում տարվել է կառավարության տարածքային քաղաքականության իրականացման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգման միջոցով:

Օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում մարզպետը ապահովել է ՀՀ օրենքների, ՀՀ նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների, ինչպես նաև նորմատիվ այլ իրավական ակտերի կատարումը:

Մարզպետարանի կանոնադրության համաձայն՝ կանոնակարգվել են մարզպետի տեղակալների, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի կողմից մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների աշխատանքների համակարգումը: Աշխատանքները կազմակերպվել են մարզպետարանի

աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների կանոնադրություններին ու աշխատանքային ծրագրերին համապատասխան:

2009 թվականին մարզպետարանի համար սահմանվել էր 145 հաստիքային միավոր, որից 113-ը՝ քաղաքացիական ծառայության պաշտոններ են:

Սահմանված կարգով կազմակերպվել է մարզային ենթակայության շուրջ 150 կազմակերպությունների գործունեությունը, համակարգվել հանրապետական գործադիր մարմինների ավելի քան 70 տարածքային ծառայությունների աշխատանքը:

Մարզպետարանի 2009թ. գործունեության համար հստակեցվել են մարզի զարգացման հիմնական ուղղությունները, մարզում առկա և առաջնահերթ լուծում պահանջող սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, դրանց լուծման համար մշակվել անհրաժեշտ միջոցառումների ծրագրեր, որոնք տեղ էին գտել մարզպետի 2009թ. աշխատանքային ծրագրում:

Մարզպետի 2009թ. աշխատանքային ծրագրի համաձայն, մարզի սոցիալ-տնտեսական գործունեության հիմնական ուղղություններն էին՝

- Մարզի զարգացման ծրագրի հիմնական գերակայությունների հստակեցումը, մարզի զարգացման 2010-2013 թվականների ծրագրի մշակումը և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացումը.
- Մարզում ՀՀ կառավարության Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի իրականացմանն ուղղված աշխատանքների կազմակերպումը և համակարգումը.
- «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված միջոցառումների իրականացումը.
- Մարզի և Բելառուսի Հանրապետության Մինսկի մարզի, ԻԻՀ Արևելյան Ատրպատականի, Արդաբիլի նահանգների միջև համագործակցության ընդլայնումը.
- Միջազգային և դոնոր կազմակերպությունների, հիմնադրամների հետ տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացումը և նրանց կողմից նպատակային ծրագրերի իրականացման օժանդակումը.
- Ներքին ռեսուրսների վերամշակման հետ կապված մրցունակ արտադրությունների զարգացման և համապատասխան ենթակառուցվածքների ամրապնդման աջակցումը, փոքր և միջին ձեռներեցության զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը.
- Մարզի տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման օժանդակումը.
- Գյուղատնտեսության ոլորտի զարգացման ծրագրերի, մասնավորապես գյուղմթերքների իրացման գործընթացի կազմակերպման և գյուղացիական տնտեսությունների հատկացման ու ապահովագրման գործի ներդրման օժանդակումը.
- Մարզում պետական ֆոնդի հողերի վերաբաշխման կազմակերպման, հողաշինության և հողային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգի ձևավորման օժանդակումը, հողերի միավորման ծրագրերի և հողի շուկայի ձևավորման աջակցումը.
- Կրթության ոլորտում կառուցվածքային և ընթացիկ բովանդակային բարեփոխումների իրականացման արդյունավետության, ուսումնական գործընթացի, կրթամշակութային օջախների շենքային պայմանների բարելավման ապահովումը.
- Կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության, նրանց բնականոն զարգացման ու սոցիալական ինտեգրացիայի համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը.

- Մշակութային և սպորտային ծրագրերի մշակումը և դրանց կատարման ապահովումը.
- Առողջապահության բնագավառում պետական նպատակային ծրագրերի իրականացման ապահովումը, առողջապահական ծառայությունների մատչելիության ու որակի բարձրացումը.
- Համայնքային բյուջեների հավաքագրմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացումը.
- «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրերի շրջանակներում իրականացվող աշխատանքների կազմակերպումը.
- Քաղաքային և գյուղական համայնքների քաղաքաշինական գլխավոր փաստաթղթերի կազմման աշխատանքների կազմակերպումը.
- Մարզի տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորափոխադրումների իրականացման կարգավորումը.
- Արտակարգ իրավիճակների պայմաններում բնակչության պաշտպանության կազմակերպման և իրականացման ապահովումը:

ՀՀ կառավարության տարածքային քաղաքականության արդյունավետ իրականացման և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի կայունացմանն ու բարելավմանն ուղղված գործունեության արդյունքում հիմնականում ապահովվել են մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների համատեղ և համաձայնեցված համագործակցությունը, պետական և համայնքային շահերի ներդաշնակ զուգորդումը:

2009 թվականի հունիսի 26-ին ՀՀ կառավարության թիվ 782-Ն որոշմամբ ՀՀ Սյունիքի մարզում կայացած ՀՀ կառավարության արտագնա նիստում հաստատվեց «ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը»:

Ծրագիրը կազմվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N38 արձանագրային որոշմամբ հաստատված հայեցակարգին համաձայն և համահունչ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությանը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N1207-Ն որոշմամբ հաստատված Կայուն զարգացման ծրագրին:

Մարզի զարգացման ծրագիրը Սյունիքում նաև ներդրումներ կատարելու առաջարկ է՝ ուղղված միջազգային, դոնոր և այլ կազմակերպություններին, գործարարներին, շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց: Սյունիքի մարզպետարանն ակնկալում է, որ նշված շահագրգիռ սուբյեկտների համար ծրագրում ընդգրկված խնդիրներն ու առաջարկները հետաքրքրություն կներկայացնեն և բոլոր ներդրողների հետ պատրաստ է փոխշահավետ համագործակցության՝ հանուն Սյունիքի մարզի կայուն զարգացման:

Ծրագրի իրականացման համար պահանջվող ընդհանուր գումարը կազմում է ավելի քան 71.9 մլրդ. դրամ, արտարժույթով նախատեսվող ՄԶԾ ֆինանսավորման ծավալները՝ 437.9 մլն. ԱՄՆ դոլար և 208.9 մլն. եվրո: Համայնքների քառամյա ծրագրերով ոլորտային կապիտալ ծրագրերի ֆինանսավորման համար պահանջվող ընդհանուր գումարը կազմում է շուրջ 28.5 մլրդ. դրամ:

Արտագնա նիստում քննարկվել են նաև մարզի համար կենսական նշանակություն ունեցող մի շարք խնդիրներ:

Կցվում է մարզի սոցիալ-տնտեսական վիճակը և մարզպետարանի գործունեությունը բնութագրող առանձին ցուցանիշների մասին տեղեկանքը /հավելված N 1/:

Հաշվետու ժամանակաշրջանում մարզպետի կողմից հրավիրվել է մարզխորհրդի 4 նիստ, համայնքների, հանրապետական գործադիր մարմինների, մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարների հետ անցկացվել 27

խորհրդակցություն: Մարզխորհրդի նիստերում, խորհրդակցություններում քննարկվել են մարզի ընդհանուր սոցիալ-տնտեսական իրավիճակի, կրթության, մշակույթի և սպորտի, առողջապահության և սոցիալական ապահովության խնդիրներին առնչվող, քաղաքաշինության, գյուղատնտեսության և հողօգտագործման, սոցիալական տարբեր ծրագրերի իրագործման, զորակոչի կազմակերպման հետ կապված և այլ հարցեր: Քննարկումների արդյունքներում տրվել են համապատասխան հանձնարարականներ, մշակվել և իրականացվել անհրաժեշտ միջոցառումներ, առանձին հարցերի ու խնդիրների լուծման համար առաջարկություններ ներկայացվել՝ ՀՀ կառավարություն, նախարարություններ և գերատեսչություններ:

Պարբերաբար, երկուշաբթի օրերին, մարզպետի մոտ անցկացվել է գործակարգավորական բնույթի օպերատիվ խորհրդակցություն, որի ընթացքում կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները ստացել են համապատասխան հանձնարարականներ, ներկայացրել տեղեկատվություն նախորդ շաբաթվա ընթացքում կատարած աշխատանքների, առկա խնդիրների և առաջիկա անելիքների մասին, մարզպետին զեկուցել կատարման ենթակա փաստաթղթերի մասին (անցկացված 31 խորհրդակցությունում տրվել է 134 հանձնարարական):

Ուշադրության կենտրոնում են եղել ՀՀ օրենսդրության պահանջների կատարման ապահովման ուղղությամբ մարզում իրականացվող աշխատանքների ընթացքը, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումներով օպերատիվ լուծում պահանջող հարցերը:

Հաշվետու ժամանակաշրջանում մարզպետի կողմից ներկայացվել է ՀՀ կառավարության որոշման 16 նախագիծ. ընդունվել է 14-ը, ընթացքի մեջ է 1-ը, մերժվել՝ 1-ը: Բացի այդ, մարզի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման և ծագած խնդիրները լուծելու նպատակով մարզպետը ՀՀ կառավարությանը և նախարարություններին է ներկայացրել 87 առաջարկություն և միջնորդություն, որից 63-ը լուծում է ստացել, 18-ը ընթացքի մեջ է, 6-ը չի լուծվել՝ կապված ֆինանսական և այլ խնդիրների հետ: Յուրաքանչյուր ամիս քննարկվում է մարզպետի կողմից ՀՀ վարչապետին, նախարարություններին ներկայացված առաջարկությունների կատարման ընթացքը:

Մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ուսումնասիրությունների և քննարկումների հիման վրա մարզպետի կողմից առաջարկություններ են ներկայացվել մի շարք օրենքների նախագծերում, օրենքներում փոփոխություններ կատարելու և այլ իրավական ակտերի ու նախագծերի վերաբերյալ:

Հետևողական և համակարգված աշխատանք է տարվել մարզում առկա հիմնախնդիրների լուծման առանձին ծրագրային առաջարկությունները ՀՀ կառավարություն ներկայացնելու ուղղությամբ, ինչպես նաև ՀՀ պետբյուջեի 2010թ. նախագծերի կազմման և ՀՀ Սյունիքի մարզի 2010թ. սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման վերաբերյալ:

Շարունակվել է միջազգային կառույցների, բարեգործական կազմակերպությունների և հիմնադրամների հետ ակտիվ համագործակցությունը:

Մարզի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման, ինչպես նաև առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման նպատակով տարվա ընթացքում տեղական և միջազգային կառույցների, հիմնադրամների և բարեգործական կազմակերպությունների միջոցով իրականացվել են ներդրումային, հումանիտար և վարկային ծրագրեր՝ շուրջ 12.1 մլրդ. դրամ ընդհանուր արժեքով (հավելված N 2), ընդգրկելով մարզի գրեթե բոլոր համայնքները:

Մարզպետարանն իր կարևորագույն խնդիրներից մեկն է համարել փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման աջակցումը և դրա համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, հաշվի առնելով, որ փոքր և միջին ձեռնարկությունները հիմնականում օգտագործում են տեղական ռեսուրսներ, չեն պահանջում խոշոր ներդրումներ և աշխատատեղեր են ապահովում համեմատաբար կարճ ժամանակահատվածում:

Մարզի փոքր և միջին բիզնեսի աջակցման նպատակով իրականացվել են մոտ 4,1 մլրդ. դրամի ավելի քան 4000 վարկային ծրագրեր. SEF ունիվերսալ վարկային

կազմակերպության կողմից մոտ 631մլն. դրամ, UMCOR «Արեգակ» վարկային ծրագրի շրջանակներում՝ 682 մլն. դրամ, «Ակբա -կրետիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի կողմից մոտ 2.5 մլրդ. դրամ: Իրականացվել են մոտ 7.4 մլրդ. դրամի զարգացման ծրագրեր, ցուցաբերվել մոտ 583.0 մլն. դրամի հումանիտար օգնություն:

Մարզպետարանի աջակցությամբ և ՀԻՍԶ ծրագրի հովանավորությամբ մարզի տարածաշրջանների բիզնես աջակցության կենտրոնները կազմակերպեցին «Սյունիք ՊՈՌԴ ԷՔՍՊՈ -2009» ցուցահանդես -վաճառքը, հիմնականում տեղական հումք վերամշակող և սննդի արտադրությամբ զբաղվող մարզի գործարարների մասնակցությամբ:

2009 թվականի ընթացքում մարզպետարանի և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի հետ գործնական կապերը կրել են շարունակական բնույթ, որի արդյունքում Կապան և Գորիս քաղաքների բնապահպանության տեղեկատվության հասարակական կենտրոնները ծավալել են ակտիվ գործունեություն:

ԵԱՀԿ-ի Երևանյան գրասենյակի օժանդակությամբ մարզի Կապան, Գորիս, Մեղրի և Սիսիան քաղաքներում «Սյունիքի մարզում կանանց տնտեսական և քաղաքական հզորացում» ծրագրի շրջանակներում հիմնադրվել են կանանց ռեսուրս կենտրոններ:

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքները որոշակիորեն նպաստել են զբաղվածության մակարդակի բարձրացմանը, բնակչությանը մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնմանը, բարելավել մրցակցային միջավայրը, միջմարզային կոոպերացիայի ստեղծմանը, պետական և տեղական բյուջեների եկամուտների ավելացմանը և այլն:

Աջակցություն է ցուցաբերվել մարզի գործարար շրջանակներին ՀՀ կառավարության կողմից սահմանված չափոփոշիչներին համապատասխան բիզնես նախագծերի մշակման, կազմման և ՀՀ վարչապետի ղեկավարությամբ ստեղծված օպերատիվ շտաբ ներկայացման գործընթացին: ՀՀ վարչապետի ղեկավարությամբ ստեղծված օպերատիվ շտաբի կողմից ընդունվել են «Մեղրու պահածոների գործարան» ԲԲԸ-ի «Պահածոների արտադրության ընդլայնման ներդրումային ծրագիրը», «Դաստակերտի բուժ. տեխնիկայի գործարան» ԲԲԸ-ի «Պաշտպանիչ ակնոցների արտադրության հիմնման ներդրումային ծրագիրը», «Էլեն Անի» ՍՊԸ-ի «Բազալտե իրերի արտադրության ներդրումային ծրագիրը»:

«Սյունիքի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով» ներդրումային ծրագրերի առաջարկ են ներկայացրել մարզի մի շարք կազմակերպություններ՝ «Լեռ էքս» ՍՊԸ, «Մեղրու պահածոների գործարան» ԲԲԸ, «Դաստակերտի բուժտեխնիկայի գործարան» ԲԲԸ, «Վի Էյջ Ստոուն» ՍՊԸ, «Էլեն և Անի» ՍՊԸ, «ԱԲԴԱ» ՍՊԸ, «Արմեն և Սարմեն» ՍՊԸ, «Արսեն և Ներսես» ՍՊԸ, «Շամբ բիզնես» ՍՊԸ: Նշված կազմակերպությունների կողմից առաջիկայում նախատեսվում է լրացուցիչ 1000-1200 նոր աշխատատեղերի ստեղծում:

Օրենսդրությամբ սահմանված կարգով մարզպետարանի կողմից ուսումնասիրվել են մարզային ենթակայության 17 կազմակերպությունների, 6 ընկերությունների և 10 համայնքների ղեկավարների ընդունած իրավական ակտերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը: Մարզային ենթակայության երկու կազմակերպությունների ղեկավարների կողմից ընդունված՝ օրենսդրությանը հակասող իրավական ակտերը ՀՀ Սյունիքի մարզպետի որոշումներով անվավեր են ճանաչվել:

Ուսումնասիրվել է մարզի քաղաքային և գյուղական համայնքներից ստացված ավագանիների նիստերում ընդունված 2606 որոշում, որից՝ 1678-ը՝ անհատական, 928-ը՝ նորմատիվ, դրանց՝ ՀՀ օրենսդրության համապատասխանության մասին կազմվել է 749 եզրակացություն: ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ և թերություններով ընդունված ավագանու որոշումները վերանայելու և ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու նպատակով, մարզի համայնքների ղեկավարներին ուղարկվել է 64 միջնորդություն, որոնց սահմանված կարգով ընթաց են տրվել: Ուսումնասիրվել են մարզային ենթակայության պետական ոչ առևտրային 11 կազմակերպությունների և փակ բաժնետիրական 10 ընկերությունների ղեկավարների կողմից ընդունված իրավական

ակտերի՝ հրամանների, ինչպես նաև 17 համայնքների ղեկավարների կարգադրությունների և որոշումների համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին և կազմվել են համապատասխան արձանագրություններ:

2009թ. ընթացքում 28 պետական ոչ առևտրային կազմակերպություններում իրականացվել է ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ, կազմվել համապատասխան եզրակացություններ և հաշվետվություններ:

Սահմանված կարգով կատարվել են փոփոխություններ մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքում, քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում և քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերում: Կազմվել և քաղաքացիական ծառայության խորհուրդ են ներկայացվել քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթի և այդ պաշտոնները զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման, թեստավորման և հարցազրույցի փուլերի համար հարցաշարեր, քաղծառայողներին իրազեկել օրենքներում և այլ նորմատիվ իրավական ակտերում կատարված փոփոխությունների մասին:

2009թ. աշխատակազմի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անց է կացվել 6 մրցույթ, որից 1-ը՝ գլխավոր, 3-ը՝ առաջատար, 2-ը՝ կրտսեր պաշտոնների համար: Մրցույթներին մասնակցելու հայտ է ներկայացրել 8 քաղաքացի, մրցույթին մասնակցել են 7-ը, հաղթող է ճանաչվել 5-ը:

Ապահովվել է քաղծառայողների մեկ երրորդի վերապատրաստումը և ատեստավորումը: Քաղաքացիական ծառայության գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող 48 քաղծառայողի շնորհվել է իրենց զբաղեցրած պաշտոնների համար նախատեսված քաղաքացիական ծառայության դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան:

Մարզպետը 2009թ. ընդունել է 206 որոշում, արձակել 109 կարգադրություն, որոնք ուղղված են եղել ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների կատարմանը, հանրապետական գործադիր մարմինների, նրանց տարածքային ծառայությունների, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բարձրացված հարցերի լուծմանը, մարզային ենթակայության կազմակերպությունների ու մարզպետարանի գործունեության բարելավմանը:

ՀՀ կառավարության, վարչապետի որոշումներին ու հանձնարարականներին, ընդհանուր առմամբ, սահմանված կարգով և պահանջվող ժամկետներում տրվել է համապատասխան ընթացք և ապահովվել կատարումը: Պետք է նշել, որ դրա հետ մեկտեղ առանձին հանձնարարականներ կատարվել են ուշացումով՝ կապված ժամկետից ուշ ստացման, աշխատանքի մեծ ծավալների և լրացուցիչ ուսումնասիրությունների անհրաժեշտության հետ:

2009 թվականին մարզպետարան մուտքագրվել է 6774 թղթակցություն, այդ թվում՝ ՀՀ նախագահի աշխատակազմից՝ 7, ՀՀ Ազգային ժողովից՝ 7, ՀՀ կառավարությունից և վարչապետի աշխատակազմից՝ 827, ՀՀ վերահսկիչ պալատից՝ 2, ՀՀ նախարարություններից և գերտեսչություններից՝ 608, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ 986, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 2765, քաղաքացիներից՝ 1572 դիմում: ՀՀ նախագահի աշխատակազմից մարզպետարան է վերահասցեագրվել 72, Ազգային ժողովից՝ 4, ՀՀ կառավարությունից և վարչապետի աշխատակազմից՝ 57, նախարարություններից՝ 15, ՀՀ Առաջին տիկնոջ գրասենյակից՝ 3, ՀՀ Ազգային անվտանգության խորհրդից 1 դիմում: Ստացված բոլոր դիմումներին սահմանված կարգով ընթացք է տրվել, կատարվել է նաև դրանց վերլուծությունը (կցվում է տեղեկանքը, հավելված N 3):

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը. ամսական մեկ անգամ մարզկենտրոնում (յուրաքանչյուր ամսվա վերջին երկուշաբթի օրը) կատարվել է քաղաքացիների ընդունելություն: Բացի այդ, քաղաքացիների ընդունելություն է կատարվել նաև մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ: 2009թ. ընթացքում կատարվել է 604 քաղաքացիների

ընդունելություն: Աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները քաղաքացիների ընդունելությունը կազմակերպել են ամենօրյա, աշխատանքային կարգով:

Մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելության, նրանց կողմից բարձրացված հարցերի և դրանց ընթացքի մասին պարբերաբար տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ կառավարություն:

Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման ու համայնքային ծառայության հարցեր

2009 թվականին հրավիրված մարզի խորհրդի նիստերում քննարկվել և լսվել են մարզպետի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի, մարզպետի 2009թ. աշխատանքային ծրագրի, սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանն առնչվող խնդիրների մասին, ինչպես նաև գյուղատնտեսության, առողջապահության և այլ բնագավառների հարցեր:

Լսվել և քննարկվել են նաև համայնքների և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարների առաջարկություններն ու դիտողությունները մարզպետարանի, մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեության, համայնքներում իրականացվող ծրագրերի վերաբերյալ:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն կազմվել է մարզի համայնքներում 2009թ. վարչական հսկողության իրականացման աշխատանքային ծրագիրը: Նշված ծրագրին համապատասխան, վարչական վերահսկողություն է իրականացվել մարզի 25 համայնքների ղեկավարների՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտադիր և պետության կողմից պատվիրակված լիազորությունների և համայնքների ավագանիների լիազորությունների իրականացման նկատմամբ:

Մարզպետարանի կողմից իրավական և մասնագիտական հսկողություն է իրականացվել համայնքների ղեկավարների սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորությունների և համայնքների ավագանիների ընդունած որոշումների նկատմամբ:

Մարզպետը ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության շրջանակներում, 2009թ. ապահովել է մարզի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրության նախապատրաստման և անցկացման աշխատանքները: Կազմակերպական օժանդակություն է ցույց տրվել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին՝ ընտրությունների նախապատրաստման և անցկացման ժամանակացույցով նախատեսված հիմնական միջոցառումների իրականացումը, դրա հրապարակայնությունն ու թափանցիկությունն ապահովելու ուղղությամբ:

Մարզպետարանը, սահմանված կարգով, իր իրավասությունների շրջանակներում լուծում է տվել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բարձրացված հարցերին, համապատասխան առաջարկություններ և միջնորդություններ ներկայացրել ՀՀ կառավարություն և ՀՀ նախարարություններ:

Աշխատանքներ են տարվել համայնքային ծառայության շարունակական ներդրման ուղղությամբ: Մարզպետարանն ըստ տարածաշրջանների աշխատանքային խորհրդակցություններ է անցկացրել համայնքների ղեկավարների հետ՝ տեղում ցույց տվել մեթոդական և խորհրդատվական օգնություն, : Օժանդակել համայնքային ծառայության պաշտոնների համալրմանը: Իրականացրել է մարզի համայնքային ծառայողների տվյալների շտեմարանի վարումը և ապահովել փոփոխված տվյալների սահմանված ժամկետներում պարբերաբար ներկայացումը ՀՀ տարածքային կառավարման նախարարություն: 2009 թվականին մարզում ավարտվել են համայնքային

ծառայողների առաջին վերապատրաստման, առաջին ատեստավորման աշխատանքները: 2010թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա է համայնքային ծառայության 390 պաշտոն, թափուր է 12 պաշտոն, որից քարտուղարի՝ 6: 2009 թվականի ընթացքում առաջին վերապատրաստում է անցել 140, ատեստավորվել՝ 157 համայնքային ծառայող:

Ապահովվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության և «Հայաստանի համայնքների հանրապետական ասոցիացիայի» նախաձեռնած «Լավագույն համայնք-2009», «Համայնքային կյանքի լավագույն լուսաբանում 2009» ու տեղական ինքնակառավարման հարցերով գիտական հոդվածների մրցանակաբաշխությունների վերաբերյալ Սյունիքի մարզի բոլոր համայնքների, մարզում գործող զանգվածային լրատվության միջոցների, բարձրագույն ուսումնական հաստատությունների և մի շարք հասարակական կազմակերպությունների տեղեկացումն ու նշված մարմինների կողմից հայտերի ներկայացումը ՀՀ տարածքային կառավարման նախարարություն և Հայաստանի համայնքների հանրապետական ասոցիացիա: Արդյունքում Գորիսի քաղաքային համայնքը ճանաչվել է 2009 թվականի տարվա լավագույն քաղաքային համայնք, իսկ Իշխանասարի գյուղական համայնքի ղեկավարը պարգևատրվել է ՀՀ Նախագահի շնորհակալագրով:

Մարզի համայնքներում հանրային իրազեկման գործընթացն արդյունավետ և օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացնելու նպատակով ձեռնարկվել են միջոցներ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջների շրջանակներում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության ապահովման, ինչպես նաև համայնքներում հանրային իրազեկման գործընթացի արդյունավետ կազմակերպման ուղղությամբ: Մարզպետարանի կողմից համայնքներում կատարվել է տեղեկատվական և տեխնիկական միջոցների գույքագրում և ապահովվել է գույքագրման արդյունքների ներկայացումը ՀՀ տարածքային կառավարման նախարարություն: Հանրային իրազեկման գործընթացի և առկա խնդիրների մասին տեղեկատվությունը մարզպետարանի կողմից մարզի խորհրդի նիստում ներկայացվել է համայնքների ղեկավարներին և առաջարկվել է համատեղ միջոցներ ձեռնարկել համայնքներում տեղ գտած թերությունները վերացնելու ուղղությամբ: Արդյունքում համայնքների ղեկավարների կողմից ապահովվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի համաձայն տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերի հրապարակումը, որը գյուղական համայնքներում իրականացվել է համայնքի տարածքում տեղադրված 300 բնակչի հաշվով առնվազն մեկ ցուցատախտակի վրա դրանք փակցնելու միջոցով:

ՀՀ տարածքային կառավարման նախարարի հանձնարարականի համաձայն, ապահովվել է Սյունիքի մարզի համայնքների ղեկավարների կողմից մեկ տարվա կատարած աշխատանքների մասին հաշվետվությունների ներկայացումը համապատասխան համայնքների հանրությանը, որոնք գյուղական համայնքներում իրականացվել են ժողովների, հարց ու պատասխանների, իսկ քաղաքային համայնքներում՝ մամլո ասուլիսների, հարցազրույցների միջոցով:

Ապահովվել է ՀՀ կառավարության հավանությանն արժանացած «Միջհամայնքային միավորումների ձևավորման և համայնքների խոշորացման հայեցակարգային մոտեցումների» շրջանակներում Սյունիքի մարզի համայնքների խոշորացման հարցի քննարկումը մարզի համայնքների ղեկավարների հետ: Արդյունքում հաշվի առնելով Սյունիքի մարզի աշխարհագրական դիրքը, ռազմավարական նշանակությունը, սահմանամերձ, բարձրլեռնային և լեռնային բնակավայրեր ունեցող համայնքների մեծ տեսակարար կշիռը, մարզպետի կողմից ներկայացվել է Սյունիքի մարզում համայնքների հնարավոր խոշորացման վերաբերյալ տարբերակ: Ներկայացված տարբերակի՝ Թասիկ և Թանահատ գյուղական համայնքների միավորման մասով խոշորացման հարցը հավանության է արժանացել ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից և ընթացքի մեջ է:

Համապատասխան միջոցներ են ձեռնարկվել համայնքների վարչական սահմաններում գտնվող մարզային և միջհամայնքային նշանակության ճանապարհներին հարող տարածքներում կուտակված աղբի մաքրման ուղղությամբ: Մարզի համայնքներում կազմակերպված շաբաթօրյակների արդյունքում բարելավվել է ճանապարհներին հարող տարածքների և բնակավայրերի սանիտարական վիճակը:

ԱՊՀ երկրների ղեկավարների խորհրդի որոշմամբ հաստատված, 1941-1945 թվականների Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 65-րդ տարեդարձին նվիրված հիմնական միջոցառումների պլանի շրջանակներում, իրականացվել է մարզի համայնքներում՝ Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշարձանների, հուշաքարերի և տարածքների բարեկարգման աշխատանքներ:

Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությանն առնչվող հարցեր

2009 թվականին մարզպետը շարունակել է համագործակցությունը հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների հետ՝ հասարակական կարգի պահպանության ու անրապնդման, քաղաքացիական պաշտպանության, հակահամաճարակային միջոցառումների անցկացման և այլ ուղղություններով:

Մարզպետը, որպես զորակոչային հանձնաժողովի նախագահ՝ իր իրավասությունների շրջանակներում, իրավիճակ է խորհրդակցություններ, հանձնաժողովի նիստեր, ընդունել որոշումներ և տվել հանձնարարականներ, համապատասխան տարածքային ծառայությունների, համայնքների ղեկավարների և այլ պաշտոնատար անձանց ուշադրությունը հրավիրել զինապարտների հաշվառման, զորակոչի և զորավարությունների կազմակերպման ապահովման վրա: Տարածքային զինկոմիսարիատների, ոստիկանության մարմինների, համայնքների ղեկավարների հետ աշխատանքներ են տարվել զորակոչից խուսափող անձանց հայտնաբերելու և զորակոչելու ուղղությամբ:

Ձեռնարկված միջոցների շնորհիվ կատարվել են 2009թ. տարեկան զորակոչային պլանները. նախատեսված 1044-ի փոխարեն զորակոչվել է 1074 զինակոչիկ, կամ առաջադրանքը կատարվել է 102.8%-ով:

Մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2009 թվականի պլանի համաձայն, անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել նաև քաղաքացիական պաշտպանության համակարգի պատրաստականության բարձրացման ուղղությամբ: 2009 թվականի հիմնական միջոցառումների պլանի համաձայն կազմակերպվել և անց են կացվել 32 շտաբային ու 5 հատուկ տակտիկական ուսումնավարություններ, 5 օբյեկտային և 2 շտաբային վարժանքներ:

Մարզային փրկարարական վարչությանը տրվել են համապատասխան հանձնարարականներ, ցուցաբերվել անհրաժեշտ օժանդակություն: Մարզպետարանի շենքում շարունակում է գործել շուրջօրյա օպերատիվ հերթապահությունը: Ազարակ քաղաքում բացվել է հրշեջ փրկարարական ծառայության նոր բաժանմունք:

2009 թվականին ՀՀ տարածքային կառավարման նախարարության փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում վերապատրաստվել է 39 աշխատող:

Հաշվետու ժամանակահատվածում մարզում գրանցվել է 103 արտակարգ իրավիճակի դեպք /նախորդ տարվա 149-ի դիմաց/, զոհվել են 8 և տուժել 43 մարդ/ նարխորդ տարի նույն ժամանակահատվածում զոհվել են 17 և վիրավարվել 40 մարդ/:

Մարզպետն իր իրավասությունների սահմաններում համակարգել է ոստիկանության և ազգային անվտանգության ծառայության տարածքային մարմինների գործունեությունը հասարակական կարգի պահպանության, կազմակերպված

հանցավորության և թմրամոլության, զենքի, հրազենի և ռազմամթերքի ապօրինի շրջանառության դեմ տարվող պայքարի աշխատանքներում, օժանդակել հանցագործությունների կանխման միջոցառումների մշակմանը և իրականացմանը, վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սահմանված կարգով կատարմանը:

Մարզպետն իր լիազորությունների շրջանակներում 2009 թվականին համապատասխան միջոցներ է ձեռնարկել պետական սահմանի պահպանության, սահմանապահ ուժերի մարտունակության և օպերատիվության բարձրացման օժանդակման, սահմանապահ ուժերի և սահմանամերձ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցության բարելավման ուղղությամբ:

Սերտ համագործակցություն է հաստատվել ՀՀ Սյունիքի մարզպետի և Ռուսաստանի Դաշնության անվտանգության դաշնային ծառայության Հայաստանի սահմանապահ վարչության թիվ 2393 զորամասի հրամանատարության հետ: Մարզպետը մշտապես մասնակցում է ՀՀ և ՌԴ պետական տոների կապակցությամբ կազմակերպված միջոցառումներին, խրախուսում ծառայության ընթացքում աչքի ընկած զինծառայողներին, օժանդակում զորամասի կենցաղային պայմանների բարելավմանը:

Մարզպետարանը միջոցներ է ձեռնարկում նաև հրամանատարության կողմից բարձրացված, սահմանայի ռեժիմի պահպանման առնչվող օպերատիվ խնդիրների լուծման ուղղությամբ: Ապահովվել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից Հայաստանում Ռուսաստանի Դաշնության անվտանգության դաշնային ծառայության սահմանապահ վարչության կողմից օգտագործվող, Սյունիքի մարզի Մեղրի քաղաքում գտնվող 88 բնակարանոց բնակելի շենքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը:

Մարզպետի կողմից առանձնահատուկ ուշադրության են արժանացել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների, Արցախյան ազատամարտում զոհված և վիրավոր, ինչպես նաև սոցիալապես կարիքավոր ընտանիքները: Նրանց պարբերաբար ցուցաբերվում է ֆինանսական և նյութական օժանդակություն:

Մարզում բնակվող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները ակտիվորեն ներգրավված են մարզի հասարակական, քաղաքական և մշակութային կյանքում: Մարզում գործում է «Ռոսսիյանե» հասարակական կազմակերպությունը:

Հետևողական աշխատանք է տարվել ՀՀ կառավարության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012 թվականների միջոցառումների, ՀՀ կառավարության 27.03.2008թ N1039-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագրերով նախատեսված աշխատանքների իրականացման ուղղությամբ:

Մարզի տարածքում 2009 թվականին արձանագրվել է հանցագործության 470 դեպք, նախորդ տարվա 241-ի դիմաց: Բացահայտումը կազմել է 94.0%, նախորդ տարվա 83.5%-ի դիմաց: Արձանագրվել է թմրամոլության և թմրանյութերի ապօրինի շրջանառության 66 դեպք, նախորդ տարվա 35-ի դիմաց, բացահայտումը կազմել է 95.2%, նախորդ տարվա 93.9%,-ի դիմաց: Արձանագրվել է զենքի, հրազենի և ռազմամթերքի ապօրինի շրջանառության 19 դեպք, նախորդ տարվա 3-ի դիմաց, բացահայտումը կազմել է 100%:

Մարզպետարանն անհրաժեշտ օժանդակություն է ցուցաբերել «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի Սյունիքի բաժանմունքի կողմից մարզի 110 ձեռնարկություններում արտադրական վտանգավոր 470 օբյեկտների հաշվառման ու տեխնիկական փորձաքննության կազմակերպման աշխատանքներին:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված լիազորությունների շրջանակներում, անհրաժեշտ աշխատանքներ են տարվել նաև հանրապետական գործադիր մարմինների մյուս տարածքային ծառայությունների հետ՝ ապահովելով նրանց, մարզպետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների փոխադարձ կապը և համագործակցությունը:

Մարզում իրականացվել է անշարժ գույքի 1638 օտարման գործարք, որից 516-ը՝ հողի օտարման, 2008 թվականի՝ համապատասխանաբար 1983-ի և 584-ի դիմաց:

2009 թվականին բնակչության բնական հավելվածը կազմել է 461 մարդ : Գրանցված անուսնությունների թիվը կազմել է 712, իսկ անուսնալուծությունների թիվը՝ 109:

2009 թվականին մարզ եկողների (հաշվառվածների) թիվը կազմել է 240 մարդ (որից ներմարզային միգրացիա՝ 124 մարդ), իսկ մեկնողներինը (հաշվառումից դուրս եկածներինը) 761 մարդ (որից ներմարզային միգրացիա՝ 118 մարդ), նախորդ տարվա համեմատ համապատասխանաբար 278 և 892 մարդու դիմաց:

Բնապահպանական պետական տեսչության Սյունիքի տարածքային բաժնի կողմից արձանագրված իրավախախտումներից և վարչական տուգանքներից պետբյուջե է մուտքագրվել 7.2 մլն դրամ, իսկ 9 ամսվա ընթացքում մարզում հաշվառված 60 ընկերություններից բնօգտագործման վճար՝ 1.2 մլն դրամ, բնապահպանական վճար - 24.5 մլն դրամ:

Համակարգված աշխատանքներ են տարվել նաև միջազգային կառույցների, հիմնադրամների և բարեգործական կազմակերպությունների հետ, որոնց միջոցով մարզում իրականացվել են 12.1 մլրդ դրամի ներդրումներ, որից 7.4 մլրդ դրամը ուղղվել է զարգացման, 583.8 մլն դրամ հումանիտար և 4.1 մլրդ դրամ վարկային ծրագրերի ֆինանսավորմանը:

Ֆինանսական բնագավառ



Սարգպետն իր լիազորությունների և իրավասությունների

շրջանակներում աշխատանքներ է տարել ՀՀ պետական բյուջեից մարզպետարանին, մարզային ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններին, ինչպես նաև մարզպետարանի միջոցով ֆինանսավորվող բնագավառներին և ծրագրերին նախատեսված միջոցների հատկացման ուղղությամբ, սահմանված կարգով վերահսկել դրանց նպատակային օգտագործումը:

2009թ. տարվա ընթացքում ՀՀ պետական բյուջեից մարզին հատկացված միջոցների ֆինանսավորումն ըստ ոլորտների ունի հետևյալ պատկերը.


Ֆինանսավորման ոլորտը	2008թ. փաստացի ֆինանսավորված գումարը (հազ.դրամ)	2009թ. նախատեսված գումարը (հազ. դրամ)	ՀՀ կառավարության 26.03.2009թ. N 302 որոշմամբ ճշտված գումար (հազ.դրամ)	2009թ. փաստացի ֆինանսավորված է (հազ.դրամ)	Կատարումը (%)
ՀՀ Սյունիքի մարզպետարան	272904.2	297560.7	279014.9	273633.6	98.1
Կրթություն, այդ թվում	3865467.7	5029681.3	4263594.2	4197248.2	
Հանրակրթական ուսուցում	3106565.7	4085029.1	3688379.1	3688379.1	100
Հատուկ կրթություն	265682.2	313785.7	285181.2	272183.2	95.4
Արտադրողական դաստիարակություն	21467.6	30577.5	30529.6	27096.4	88.8
Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով ուսուցման վարձավճարի փոխհատուցում	10867.4	19490.6	19490.6	19490.6	100
Մանկավարժների և դպր.	21218.0	21218.0	21218.0	21218.0	100

Երեխաների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում					
Կրթական հիմնարկների հիմնանորոգում/կատարողական/	368531.0	552572.4	218795.7	168880.9	77.2
6 տարեկան երեխաների ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում	71135.8	7008.0	0	0	0
Մշակույթ, այլ թվում	42062.0	48252.5	47777.3	47777.3	
Թանգարան	7367.6	8582.1	8550.9	8550.9	100
Մշակույթի տուն	1100.7	1301.8	1301.8	1301.8	100
Թատրոն	26422.0	31196.9	30752.9	30752.9	100
Մշակութային միջոցառումներ	7171.7	7171.7	7171.7	7171.7	100
ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացումներ	403962.1	86200.0	86200.0	8180.0	9.5
Ավտոճանապարհների ձմեռային պահպանում և շահագործում	65000.0	107731.7	107731.7	96958.5	90
Հանրակրթական դպրոցներում զենքի պահման սենյակի ընթացիկ նորոգում և պահպանում	0	23870.0	0	0	0
Դոտացիա	1208767.8	1554433.1	1554433.1	1554433.1	100
Համանքներին տրվող այլ տրանսֆերտներ	14740.0	14506.7	14506.7	14506.7	100
ԸՆԴԱՄԵՆԸ	5872903.8	7162236.0	6353257.9	6192737.4	

Առողջապահության բնագավառում հիվանդանոցային, ամբուլատոր-պոլիկլինիկական և դիսպանսերային ծրագրերով նախատեսված բազային ծավալը 2009թ. կազմել է 1398499.4 հազ. դրամ, առողջապահության գործակալության կողմից ընդունված 1393003.9 հազ. դրամ կատարողականը ֆինանսավորվել է ամբողջությամբ, աճը նախորդ տարվա համեմատ կազմում է 8.2 %, կամ 105795.8 հազ.դրամով ավելի, քան 2008թ.-ին:

«Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան ՀՀ պետական բյուջեով 2009թ. մարզի 109 համայնքներին նախատեսված 1554433.1 հազար դրամ դոտացիաները հատկացվել են ամբողջությամբ:

Համայնքների բյուջեների կատարման ընթացքը ըստ հարկատեսակների հետևյալն է.




Դոտացիաները հիմնականում նպատակաուղղվել են տեղական ինքնակառավարման մարմինների՝ գործող օրենսդրությամբ վերապահված պարտադիր և պատվիրակված լիազորությունների իրականացմանը:

Համայնքների բյուջեները եկամտային մասով կատարվել են 88.8%-ով, իսկ սեփական եկամուտները ապառքներով՝ 77.1%, աճը 2008թվականի համեմատ կազմել է 12.6%: Սեփական եկամուտների բացարձակ աճը նախորդ տարվա համեմատությամբ կազմում է 98817.1 հազ. դրամ: Փաստացի հավաքագրված սեփական եկամուտների 881228.1 հազ. դրամ ընդհանուր ծավալում հողի հարկի տեսակարար կշիռը կազմում է 25.8%, գույքահարկինը՝ 23.3%, պահուստային ֆոնդի հողերի վարձավճարներինը՝ 20.2%:

Ցուցանիշներ			
Համայնքների եկամուտները, այդ թվում	Նախատեսված ընդամենը եկամուտներ	2007թ.	2636615.1
		2008թ.	2513218.5
		2009թ.	2819643.7
	Նախատեսված սեփական եկամուտներ	2007թ.	1431387.6
		2008թ.	1170592.4
		2009թ.	1143273.6
Համայնքների ընդամենը եկամուտների կատարման տոկոսը			ընդամենը
	մարզի միջինը/%/	2007թ.	82.40%
		2008թ.	81.40%
		2009թ.	89.20%

Համայնքների բյուջեներով իրականացված ծախսերն ունեն հետևյալ պատկերը.



□ Աշխատավարձ և սոցապ վճար ■ Գործուղման ծախսեր □ Այլ ծառայություններ ■ Այլ ծախսեր ■ Սուբսի

ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից գումարներ հատկացնելու, ՀՀ կառավարության որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հանրապետական գործադիր մարմիններին են ներկայացվել 4 առաջարկություններ, որոնք ամբողջությամբ ընդունվել և դրական լուծում են ստացել:

2009թ. սահմանված կարգով և ժամկետներում կազմվել և ՀՀ ֆինանսների նախարարություն են ներկայացվել մարզի 109 համայնքների բյուջեների ամփոփը, 125 պետական ոչ առևտրային կազմակերպությունների պահպանման ծախսերի նախահաշիվները և հաշվարկային ցուցանիշները, 2010թ. բյուջետային ֆինանսավորման հայտերը, 2010-2012թթ. պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերը:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ


Մարզի տնտեսության առանցքային ճյուղն ավանդաբար եղել և մնում է արդյունաբերությունը: Մարզի արդյունաբերական ձեռնարկությունների ապրանքային արտադրանքի ծավալը 2009 թվականին՝ նախնական տվյալներով, ընթացիկ գներով կկազմի շուրջ 94.0 մլրդ. դրամ, նախորդ տարվա նկատմամբ աճը համադրելի գներով կկազմի մոտ 3.0%:

Իրացվել է ավելի քան 84.8 մլրդ. դրամի պատրաստի արտադրանք, որից ԱՊՀ երկրներում՝ 34.6 մլն. դրամ, այլ երկրներում՝ 37.9 մլրդ.դրամ:

Արդյունաբերության առաջատարը հանքագործական ճյուղն է, որն ապահովել է մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի ավելի քան 85.0%-ը: Հունքային, տեխնոլոգիական, կադրային ներուժի և իրացման կայուն շուկայի առկայության դեպքում այս ճյուղը մարզի տնտեսության մեջ տևական ժամանակ կպահպանի իր առաջնային դերը:

Հանրապետության Նախագահի հանձնարարականի, ՀՀ կառավարության և մարզպետի արագ արձագանքման ու հետևողական աշխատանքների արդյունքում հանքարդյունաբերության ոլորտում աշխատատեղերի կրճատումները հասցվել են նվազագույնի:

Մարզի արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալների բաշխվածությունը 2009 թվականին՝ ըստ տնտեսության գերակա ճյուղերի ունի հետևյալ պատկերը.



2009 թվականին հանրապետությունում թողարկված արդյունաբերական արտադրանքի շուրջ 14.0%-ը բաժին է ընկել Սյունիքի մարզի արդյունաբերական կազմակերպություններին:

Նախորդ տարվա համեմատ 2009 թվականին մարզի արդյունաբերական կազմակերպություններում արձանագրված արտադրության ծավալների 3.0% աճը հիմնականում պայմանավորված է մետաղական հանքաքարերի արդյունահանման 3.7% աճով (վերջին ամիսներին պղնձի խտանյութի արդյունահանման ֆիզիկական ծավալի 14.0% աճի հետ մեկտեղ, միջազգային շուկայում նկատվում է պղնձի գնի աճ) և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրության ծավալների աճով (36.2%):

Մարզի արդյունաբերության ներկա վիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ եթե մարզում արդյունաբերական արտադրանքի ծավալը հաշվարկվի առանց հանքագործական արդյունաբերության կազմակերպությունների թողարկած արտադրանքի ծավալի, ապա նախորդ տարվա նկատմամբ կարձանագրվի արտադրության ծավալների նվազում:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված, նախորդ տարվա համեմատ մարզում մոտ 5.0%-ով նվազել են մշակող արտադրության ծավալները, ինչը հիմնականում արդյունք է սննդամթերքի, ներառյալ խմիչքների արտադրության (0.7%), մանածագործական և կարի արտադրության (69.0%), պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրության (8.0%), մեքենաների և սարքավորումների արտադրության (50.0%), երկրորդային հումքի մշակման ձեռնարկությունների (25.0%) ծավալների նվազմամբ:

Մարզի արդյունաբերական արտադրանքի արտադրության ծավալի շուրջ 87.5%-ը բաժին է ընկնում Կապանի, 8.9%-ը՝ Մեղրիի, 2.7%-ը՝ Գորիսի և 0.9%-ը՝ Սիսիանի տարածաշրջաններին:

2009 թվականին՝ նախնական տվյալներով, մարզում կարտադրվի մոտ 1205 մլն. կվտ/ժամ էլեկտրաէներգիա, որը 2008թ. տարեկան ցուցանիշի նկատմամբ կկազմի 107.4%: Մարզում արտադրված էլեկտրաէներգիայի ծավալը կազմում է հանրապետությունում թողարկված էլեկտրաէներգիայի շուրջ 16.0%-ը, հիդրոէլեկտրակայաններում արտադրվածի՝ շուրջ 45.0%-ը:

Համաձայն ՀՀ կառավարության 2009թ. նոյեմբերի 12-ի «Պետական մարմինների կողմից մարզերում համապատասխան գործունեության իրականացման համար ՓՀԷԿ-երին, հանքարդյունաբերության և հանքուտնմասիրության նպատակով տրամադրվող լիցենզիաների, դրանց մարզում տնտեսական ակտիվության վրա ազդեցության և ուսումնասիրության արդյունքների վերլուծության մասին» արձանագրային որոշման, հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից՝ 2009թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ, ՀՀ Սյունիքի մարզում ՓՀԷԿ-երի կառուցման և էլեկտրաէներգիա արտադրելու նպատակով տրամադրվել է 37 լիցենզիա, որից 24-ը արտադրում է էլեկտրաէներգիա, իսկ 13 ՓՀԷԿ կառուցման փուլում են: Ընդ որում ՓՀԷԿ-երի կողմից արտադրված էլեկտրաէներգիան 2009թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ մարզում կազմել է 43.5մլն.կվտժ.(ամենաշատը հանրապետությունում):

2009 թվականին մարզում սպառված գազի ծավալը՝ նախնական տվյալներով, կկազմի շուրջ 32.9 մլն. խոր. մետր կամ 1.9%-ով ավելի, քան նախորդ տարում: Բաժանորդ բնակիչների թիվը կազմել է 22100 (նախորդ տարվա համեմատ 4.2%-ով ավելի), իսկ կազմակերպություններինը՝ 265 (նախորդ տարվա համեմատ 37.3%-ով ավելի): Բնակչության կողմից սպառված գազի տեսակարար կշիռը կազմել է շուրջ 46.0%:


Քաղաքաշինության, տրանսպորտի եւ ճանապարհաշինության բնագավառ



2009 թվականի ընթացքում մարզում իրականացվել են շուրջ 9 մլրդ. 388 մլն. դրամի համաշինարարական աշխատանքներ, որից՝ 1 մլրդ. 22,5 մլն. դրամի կապիտալ շինարարության և 8 մլրդ. 365,5 մլն. դրամի հիմնանորոգման ու վերանորոգման աշխատանքներ: Միայն ճանապարհաշինարարության բնագավառում կատարվել է ավելի քան 5,5 մլրդ դրամի հիմնանորոգման աշխատանք:

2008 թվականի համեմատությամբ մարզում իրականացված համաշինարարական աշխատանքների ծավալը աճել է 1,6 անգամ:

2008-2009 թվականներին մարզում իրականացված համաշինարարական աշխատանքների ծավալները / Հազ. դրամ/




ՀՀ պետբյուջեի միջոցների հաշվին մարզպետարանի պատվիրատվությամբ հանրակրթական 3 դպրոցներում (Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր, Որոտան /Սիսիանի/ և Սառնակունք գյուղերի միջնակարգ դպրոցներ) իրականացվել են 168 մլն. 881 հազ. դրամի հիմնանորոգման աշխատանքներ:

ՀՀ քաղաքաշինության նախարարության միջոցով 2009 թվականի ՀՀ պետբյուջեով նախատեսված միջոցների հաշվին շարունակվել ու ավարտվել են Սյունիքի մարզային գրադարանի (6,63 մլն.դրամ), ՀՀ ԳԱԱ էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնի մետալուրգիայի լաբորատորիայի շենքի (67,2 մլն.դրամ), Լորի (60,7 մլն.դրամ), Արավուսի (20,3 մլն.դրամ), Գորիսի Ա. Բակունցի անվան (71,4 մլն.դրամ), Անգեղակոթ գյուղի (14,4 մլն.դրամ) ու Տեղ գյուղի թիվ 1 միջնակարգ (20,1 մլն.դրամ) դպրոցների ինչպես նաև Կապան քաղաքի Ալ. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոնի շենքի (10,4 մլն.դրամ) հիմնանորոգման աշխատանքները: Ընթացքի մեջ են եղեգ գյուղի դպրոցի կառուցման (62,7 մլն.դրամ) աշխատանքները: ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին ընթացիկ տարում սկսվել և ավարտվել է Կապան քաղաքի Երկաթուղայինների թաղամասով անցնող Բաղաբուրջ գետակի վթարված հեղեղատարի վերականգնման (171,3 մլն.դրամ) աշխատանքները:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից իրականացվել են Իշխանասար գյուղի խմելու ջրի ներքին ցանցի, Ալվանք գյուղի ոռոգման եռաստիճան պոմպակայանի և խողովակների վերանորոգման, Տեղ գյուղի խմելու ջրի ներքին ցանցի կառուցման և Արավուս համայնքի խմելու ջրի մատակարարման բարելավման աշխատանքները՝ 255 մլն. 938 հազար դրամ ընդհանուր գումարով:

ՀՀ մշակույթի նախարարության կողմից մարզում իրականացվել են «Վահանավանք» վանքային համալիրի ու Հալիձոր բերդի վերանորոգման և վերականգնման աշխատանքները ընդհանուր 36,5 մլն. դրամի չափով:

Կապիտալ ներդրումների ծավալներն ըստ ֆինանսավորման աղբյուրների բնութագրվում են հետևյալ կերպ /մլն.դրամ/



1. ՀՀ պետբյուջե	-	3542,54
2. Արտասահմանյան և այլ կազմակերպություններ	-	5845,34
Ընդամենը	-	9 387,88

Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցների հաշվին մարզի 8 համայնքներում իրականացվել են բազմաբնույթ ծրագրեր: Սրաշեն /109,2 մլն. դրամ/, Իշխանասար /66,1 մլն. դրամ/ գյուղերում կառուցած նոր, իսկ Շինուհայր /99,6 մլն. դրամ/ գյուղի դպրոցում և Գորիսի հենակետային վարժարանում /110,8 մլն. դրամ/ իրականացրած հիմնանորոգման աշխատանքները էականորեն բարելավել են աշակերտների ուսումնառության պայմանները: Մեղրի քաղաքի Արաքսաշեն թաղամասի ջրամատակարարման համակարգի կառուցմամբ /67,2 մլն. դրամ/ ու Մեղրի քաղաքի կոյուղու ներքին ցանցի /40,8 մլն. դրամ/ վերակառուցմամբ բարելավվել է քաղաքի ջրամատակարարման և կոյուղու ցանցերի շահագործումը: Սրաշեն, Կոռնիձոր և Տանձատափ համայնքների կենտրոնների շենքերի /92,5 մլն. դրամ և 37,1 մլն. դրամ/ կառուցումն ու նորոգումը նոր պայմաններ է ստեղծել տեղական իրքնակառավարման մարմինների աշխատանքի համար, Սիսիան քաղաքում 102,4 մլն. դրամ գումարով, հիմնանորոգվել է մշակույթի տունը ու կառուցվել ջեռուցման նոր համակարգ:

ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ԾԻԳ» ՊՀ-ի կողմից 41,2 մլն. դրամով կառուցվել է Մեղրիի սանիտարական կարանտինային կետը: 710,0 մլն. դրամ ընդհանուր նախահաշվային արժեքով սկսվել, և 200,0 մլն. դրամի չափով իրացվել է «Գորիսի հիվանդանոց» ՓԲԸ-ի վերակառուցման-հիմնանորոգման աշխատանքները:

«Հայաստան համահայկական հիմնադրամ»-ի միջոցով Գորիսում սկսվել են ՀՀ ինվազիվ կարդիոլոգիայի կենտրոնի կառուցման աշխատանքները /սրտաբանական կենտրոն/ 222,4 մլն. դրամ արժեքով:

«Դատախիրավական բարեփոխումներ» ծրագրերի իրականացման գրասենյակի միջոցով սկսվել է առաջին ատյանի Գորիսի դատարանի շենքի և Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Մեղրի քաղաքի նստավայրի նոր շենքի կառուցումը: 2009 թվականի ծրագրով կատարվել են 198,4 մլն. դրամի շինմոնտաժային աշխատանքներ:


«Գյուղական բարեփոխումների աջակցության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից իրականացվել է Ագարակ քաղաքի անասնաբուժական և բույսերի կարանտինի սահմանային հսկիչ կետի կառուցման աշխատանքները` 101,8 մլն. դրամ գումարով և 36,1 մլն. դրամով, Քարահունջ գյուղում կառուցվել է կոյուղագիծ և սեպտիկ հոր:

«Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի վերլուծության և կառավարման գրասենյակ» (IFAD) կազմակերպության կողմից 2009 թվականին իրականացվել են Անգեղակոթի /20,7 մլն. դրամ/, Աղիտուլի /11,0 մլն. դրամ/ և Կապան քաղաքի Վաչագան թաղամասի /22,5/ գազաֆիկացումը: Կառուցվել է Լեիվազ, Վարդանիձոր և Քաշունի գյուղերի խմելու ջրի ցանցերը 16,2 մլն. դրամ ընդհանուր արժեքով:

«Կորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից 2009 թվականին մարզի 20 համայնքում իրականացվել են դպրոցների և մանկապարտեզների, խմելու և ոռոգման ջրագծերի, առողջապահական հիմնարկների,

ակունքների ու կենցաղի տների հիմնանորոգման 37 ծրագիր՝ 72,5 մլն. դրամ ընդհանուր արժեքով:

Մարզում իրականացված քաղաքաշինական ծրագրերի ծավալներն ըստ ուղղվածությունների բնութագրվում են հետևյալ կերպ



1. Ավտոճանապարհների հիմնանորոգում և նորոգում	- 5 541,5	5. Ջրնուղ-կոյուղու ցանցերի շինարարություն և նորոգում	- 393,9
2. Դպրոցների, նախադպրոցական հիմնարկների կառուցում, հիմնանորոգում և նորոգում	- 1 143,4	6. Դատախրավական համակարգի շենքերի կառուցում	- 198,4
3. Ճանապարհների ձմեռային պահպանում, պահպանում-շահագործում	- 854,3	7. Պատմամշակութային օբյեկտների հիմնանորոգում, եկեղեցաշինություն	- 117,7
4. Առողջապահական հիմնարկների կառուցում, հիմնանորոգում և նորոգում	- 440,2	8. Բնակավայրերի գազաֆիկացում, բնակֆոնդի հիմնանորոգում	- 70,9
		9. Այլ ենթակառուցվածքներ	- 605,1
		Ընդամենը	- 9 մլրդ. 388 մլն. դրամ

«Էներջինգ Սարկեթս Գրուպ ԼՏԴ» ընկերության Հայաստանյան ներկայացուցչության առողջության առաջնային պահպանման ծրագրի միջոցներով մարզի 10 համայնքներում կատարվել է բուժ. կետերի վերանորոգում 17,9 մլն. դրամի չափով:

ՄԱԿ-ի փախստականների հարցերով զերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի ֆինանսավորմամբ, «Օթևան» երիտասարդ մարդկանց քրիստոնեական ասոցիացիա հասարակական կազմակերպության կողմից 7,2 մլն. դրամի ներդրում է կատարվել Գորիս քաղաքի հենակետային վարժարանի շենքի հիմնանորոգման համար, որի հաշվին պատրաստվել և տեղադրվել են «Եվրոստան» տիպի նոր պատուհաններ:

«Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ»-ի կողմից հատկացված 25,7 մլն. դրամով վերականգնվել է Կապանի թիվ 2 հատուկ կրթահամալիրի ջեռուցման համակարգը:

«Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից հատկացված 4 մլն. դրամով կատարվել է Վարդանիձոր գյուղի համայնքային կենտրոնի շենքի տանիքի մասնակի վերանորոգում:

Հայ օգնության միության կողմից հատկացված 4,2 մլն. դրամով հիմնանորոգվել է Խնածախ գյուղի մանկապարտեզի 2-րդ հարկը:

Մոսկվայաբնակ բարերար Սերգեյ Համբարձումյանի կողմից հատկացված 275,0 մլն. դրամի շնորհիվ հիմնանորոգվել է Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցը և դպրոցի համար ձեռք բերվել կահույք ու սարքավորումներ 65 մլն. դրամ արժեքով, Արշավիր Սարգսյանի կողմից հատկացված 38,5 մլն. դրամի սահմաններում կառուցվել է

ճակատեն գյուղի մատուռը, իսկ Օնիկ Կարապետյանի կողմից հատկացված 5,0 մլն. դրամի սահմաններում վերանորոգվել է Կարճևան գյուղի եկեղեցին:

Կցվում է ՀՀ Սյունիքի մարզում 2009 թվականին իրականացված քաղաքաշինական ծրագրերի մասին տեղեկանքը /հավելված 4/:

Ֆինանսավորման տարբեր աղբյուրներով 2009 թվականի ընթացքում մարզի ճանապարհաշինարարական և այլ կազմակերպությունների կողմից իրականացվել են շուրջ 6 395,8 մլն. դրամի աշխատանքներ:

Համաշխարհային բանկի միջոցներով մարզում իրականացվել են տարբեր նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգման 3 800,8 մլն. դրամ ընդհանուր գումարի, ՀՀ պետական բյուջեով՝ 1717,3 մլն. դրամի, իսկ Կապան համայնքի տեղական բյուջեով՝ 23,4 մլն. դրամի հիմնանորոգման ու նորոգման աշխատանքներ:

ՀՀ պետբյուջեի միջոցներով իրականացվել են տարբեր նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պահպանման ու շահագործման, ձմեռային պահպանության 854,3 մլն դրամ ընդհանուր գումարի աշխատանքներ, այդ թվում՝ պետական նշանակության ճանապարհների ձմեռային պահպանության, ընթացիկ պահպանման ու շահագործման համար՝ 757.334 մլն. դրամ, իսկ մարզային նշանակության ճանապարհների ձմեռային պահպանության, ընթացիկ պահպանման ու շահագործման համար՝ 96.958 մլն. դրամ:

Մ-2 Երևան-Գորիս-Մեղրի ավտոճանապարհի 244-րդ կմ նիշում սողանքի հետևանքով փլուզված հատվածը շրջանցելու նպատակով կառուցվում է նոր ճանապարհ: Ընթացիկ տարում կառույցի նախագծային արժեքի 1 մլրդ 158 մլն. դրամից իրականացվել է 798.0 մլն. դրամի շինարարական աշխատանքներ:

Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծրագրով իրականացվել է Սիսիանի տարածաշրջանի Որոտան-Ույծ կամրջի հիմնանորոգման աշխատանքներ՝ 74,4 մլն. դրամ արժեքով:

Հասարակական տրանսպորտի աշխատանքներն անվտանգ կազմակերպելու և բարելավելու նպատակով ներմարզային 8 երթուղիներում ուղևորափոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության համար կազմակերպվել և սահմանված կարգով անց են կացվել նոր մրցույթներ:

2009 թվականի ընթացքում ստացվել և ընթացք է տրվել 17 հողահատկացման առաջարկությունների:

Մարզի համայնքների կողմից տրվել է 135 շինարարության, 1 քանդման թույլտվության և շինարարության ավարտը փաստագրող 85 ակտ և դրանց վերաբերյալ սահմանված կարգով իրազեկվել է ՀՀ Սյունիքի մարզպետարանին:

Աշխատանքներ են տարվել ինքնակամ շինարարությունը կասեցնելու և օրենքով սահմանված կարգով դրանց հետևանքները վերացնելու ուղղությամբ: 2009 թվականի ընթացքում մարզի 7 քաղաքային և 102 գյուղական համայնքներում քաղաքաշինական գործունեության որորոտում կատարվել են պլանային ստուգումներ:

Պլանային ստուգումների ընթացքում ինքնակամ շինարարության 64 փաստ է արձանագրվել մարզի համայնքներում, որից՝ 43-ը՝ Կապան, 8-ը՝ Գորիս, 2-ը՝ Սիսիան, 3-ը՝ Մեղրի, 2-ը՝ Ագարակ, 5-ը՝ Քաջարան քաղաքներում: Մեկ դեպք է արձանագրվել Իշխանասար գյուղում:

ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 23-ի «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման ոլորտները և անցկացման պայմանները հաստատելու մասին» N1854-Ն որոշման համաձայն, կատարվել է 45 համայնքների կողմից ներկայացված 71 ծրագրերի ծավալների և կատարողական ակտերի ճշգրտում և աշխատանքների հսկման աշխատանքներ:

Շարունակվել են մարզի բնակավայրերի զազաֆիկացման ուղղությամբ տարվող աշխատանքները: Տարեսկզբի 18619-ի դիմաց բաժանորդների թիվը տարեվերջին հասել է 22400-ի, կամ աճը կազմել է 20,3%, իսկ 1988 թվականի համեմատ այն աճել է 49,0%-ով: Գործող զազատար ցանցերի երկարությունը ավելացել է 7 կմ-ով: «Գյուղական

տարածքների տնտեսական զարգացման ծրագրի վերլուծության և կառավարման գրասենյակի» (IFAD) միջոցների հաշվին 87,2 մլն. դրամի շինարարական աշխատանքներ են կատարվել Անգեղակոթ և Աղիտու գյուղերի ու Կապան քաղաքի Վաչագան թաղամասի գազաֆիկացման ուղղությամբ: «Հայրուսգազարդ» ՓԲԸ-ի միջոցներով 11 հազար բնակարաններում անվճար տեղադրվել են անվտանգության համակարգեր: Ներկայումս մարզի 109 համայնքներից գազաֆիկացված է 33-ը: Բնական գազ է մատակարարվում նաև մարզի 246 հիմնարկների ու ձեռնարկությունների:

Չոհված /մահացած/ և հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների/ ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման նպատակով անհրաժեշտ աջակցություն է ցուցաբերվել ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան հանձնաժողովին՝ մարզի համայնքներում կատարած ուսումնասիրությունների և տվյալների անհրաժեշտ բազայի ստեղծման գործում: Մարզի զոհված /մահացած/ կամ հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների/ ընտանիքների բնակարանային պայմանները ուսումնասիրելու և ստուգելու նպատակով ստեղծված բնակարանային հարցերի հանձնաժողովի կողմից տարվա ընթացքում ուսումնասիրվել և քննարկվել է 11 համայնքների կողմից ներկայացված 22 ընտանիքի անձնական գործ ու անհրաժեշտ տվյալները ներկայացվել ՀՀ պաշտպանության նախարարություն: ՀՀ 2009թ. պետբյուջեով այդ նպատակով նախատեսված միջոցների հաշվին բնակարան ձեռք բերելու նպատակով, հաշվառման մեջ գտնվող 17 ընտանիքի, ցույց է տրվել համապատասխան ֆինանսական աջակցություն:

Որոշակի աջակցություն է ցուցաբերվել կոմունալ ծառայությունների դիմաց վարձավճարների գանձման գործում: Բնակարանային սպասարկման վարձավճարի գանձումը կազմել է 59,8% նախորդ տարվա 59.7% դիմաց, խմելու ջրի վարձավճարինը՝ 96,3% նախորդ տարվա 94,4% դիմաց, աղբահանության վարձավճարինը՝ 82,6% նախորդ տարվա 81,8% դիմաց:

Գյուղատնտեսության եւ բնապահպանության բնագավառ



2009թ. ընթացքում մարզում գյուղատնտեսությամբ զբաղվել են 13995 գյուղացիական և ֆերմերային տնտեսություններ, գյուղատնտեսական մթերքների վերամշակմամբ և արտադրությամբ 55 գյուղատնտեսական կազմակերպություններ: 2009թ գյուղատնտեսության համախառը արտադրանքը նախնական հաշվարկներով կազմել է 39մլրդ. դրամ:

Տարերային աղետներից /ցրտահարություն, կարկտահարություն և գերխոնավություն/ տուժել են 78 համայնքներ, ընդհանուր վնասը կազմել է 2.988.0 մլրդ. դրամ:

Կազմվել է մարզի գյուղատնտեսության և բնապահպանության ոլորտների 2010-2013թթ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը:

2009թ մարզի գյուղատնտեսության բնագավառի համեմատական ցուցանիշները ներկայացվում է ստորև.

Ցուցանիշների անվանումը	Չափի միավոր	2008թ	2009թ	Համեմատական տոկոսը
1	2	3	4	5
Հնձվել է հացահատիկ	հեկտար	20390	22120	108.5
Արտադրվել է				
Հացահատիկ	ցենտներ	459869	299734	65.2
Կարտոֆիլ	ցենտներ	332997	323708	97.2
Բանջարեղեն	ցենտներ	178651	174549	97.7

Պտուղ-հատապտուղ	ցենտներ	200564	138088	68.8
Կուտակվել է խոտ	տոննա	92.2	98.1	106.4
Կուտակվել է ծղոտ	տոննա	21.3	12.1	56.8
Ցանվել է աշնանացան	հեկտար	15385	12713	82.7
Կատարվել է ցրտահերկ	հեկտար	2774	2254	81.2
Արտադրվել է`				
Կաթ	տոննա	56.4	56.5	100.2
Միս	տոննա	9.7	9.95	102.6
Բուրդ	տոննա	68.1	69.8	102.5
Մեղր	տոննա	33.4	34.8	104.2
Չուլ	մլն.հատ	20.9	21.5	102.8

ՀՀ կառավարության կողմից մարզի հինգ համայնքների /Սպանդարյան, Իշխանասար,Սավվարդ, Նժդեհ, Տաշտուն/ հացահատիկի ցանքատարածությունների ընդլայնման և արտադրության զարգացման նպատակով հատկացվել է ավելի քան 15 մլն. դրամ սուբսիդիա: Այն տրվել է 431 հա ցանքատարածությունների համար, 185 շահառուների, յուրաքանչյուր հեկտարին 35000 դրամ:

Մարզում առկա 15 սերմարտադրող ֆերմերներ, մարզի գյուղացիական տնտեսություններին և հարևան մարզերին ապահովել են 750 տոննա աշնանացան ցորենի և 300 տոննա գարնանացան և աշնանացան գարու սերմանյութով շուկայականից էժան գներով: Մարզ է ներկրվել 340 տոննա ազոտական պարարտանյութ, 838կգ թյունանյութ մկնանման կրծողների դեմ պայքարի և 960կգ թունանյութ` վնասատուների դեմ պայքարի աշխատանքները կազմակերպելու համար:

2009թ իրացվել է 1700 տոննա հացահատիկ, 9950 տոննա կենդանի քաշով միս, 8990 տոննա կաթ, 3050 տոննա կարտոֆիլ, 950 տոննա բաշարեղեն, 550 տոննա պտուղ և այլ գյուղատնտեսական մթերքներ:

Մարզում առկա չորս ջրօգտագործող ընկերությունների կողմից ժամանակին և անխափան կազմակերպվել են ոռոգման աշխատանքները:

Ստորև ներկայացվում է վարձավճարների գանձման վերաբերյալ տեղեկանքը.

Ընդամենը մարզում	Ոռոգված հողատարածքը /հա/	Մատակարարված ջրի քանակը /հազ.լամ/	Հասույթը /հազ.դրամ	Փաստացի գանձված վարրձավճար.	Ապառաքը /հազ.դրամ /	Տոկոսը %
2008թ	1597	5566.0	48359.0	39947.0	8618.0	83
2009թ	1511	3844.0	34596.0	31925.0	2671.0	92

2009թ. մարզում պակասել է խոշոր և մանր եղջերավոր անասունների գլխաքանակը, ավելացել է խոզերի գլխաքանակը, մեղուների ընտանիքները և թռչնի քանակը:

Անասնագլխաքանակի շարժն ունի հետևյալ նախնական պատկերը.

Ընդամենը մարզում	Ընդամենը խ.ե.ա.	որից կովեր	Ընդամենը մ.ե.ա.	որից ոչխար	Այծ	խոզեր	Մեղվա ընտանիք	Թռչուն
2008թ	52440	25125	67711	63519	4192	4000	32081	136521
2009թ	47640	24785	59160	54700	4460	4600	32185	138170
Տարբերություն	-4800	-360	-8551	-8819	+268	+600	+104	+1649

2009թ խոշոր և մանր եղջերավոր անասունների, խոզերի և թռչնի վարակիչ հիվանդություններ չեն արձանագրվել: Պետպատվերի շրջանակներում ժամանակին կատարվել են բոլոր կանխարգելակիչ պրոֆիլակտիկ միջոցառումները: Կատարվել է 5120 գլուխ խոշոր եղջերավոր անասունների արհեստական սերմնավորում: Մարզում գործում են երեք տոհմային տնտեսություններ:

Մարզպետարանը անհրաժեշտ ուշադրություն է դարձրել բույսի և շրջակա միջավայրի պահպանությանը, աջակցել բնապահպանական օրենսդրության կատարմանը, արգելանոցների պահպանմանն ու օգտագործմանը, համագործակցել բնապահպանական խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների հետ:

Բնապահպանական տեսչության Սյունիքի տարածքային բաժնի հետ համատեղ ստուգումներ և ուսումնասիրություններ են իրականացվել 16 բնապահպանական օբյեկտներում, 26 անձի նկատմամբ կիրառվել է 1.8 մլն.դրամի տարբեր վարչական տուգանքներ: Կազմվել է շրջակա միջավայրի բնապահպանական վնասի 20 ակտեր, ընդհանուր վնասը կազմել է 6.9 մլն.դրամ: Դրամական մուտքերը պետական բյուջե կազմել է 7.2 մլն. դրամ:

Թափոնների օգտագործման և տեղափոխման ուղղությամբ ստուգվել են 5-ը օբյեկտներ, որոնց նկատմամբ կիրառվել է վարչական տուգանքներ 50հազ.-ական դրամի չափով:

Մարզի 38 հանքավայրերից շահագործվում է 24-ը (7-ը մետաղական, 17-ը ոչ մետաղական), 14-ը գտնվում են ուսումնասիրման փուլում:

Բոլոր հանքշահագործողները ունեն հողհատկացման և ընդերքի օգտագործման թույլտվության համապատասխան փաստաթղթեր:

Մարզում գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, վերամշակող կազմակերպությունների և ոլորտի կայուն զարգացման ապահովման համար դեռևս լուրջ հարց է գյուղմթերքների իրացումը, հացահատիկային մշակաբույսերի որակյալ սերմանյութի, դիզ. վառելիքի և ազոտական պարարտանյութի ձեռք բերման խնդիրները:

Հողաշինության և հողօգտագործման բնագավառ



Մարզի 43.8 հազ. հա վարելահողերից 2009թ. գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող տնտեսությունների կողմից օգտագործվել է 37.6հազ.հա /86.0 %/: Համայնքներում փաստացի չի օգտագործվել մոտ 6.2 հազ. հա վարելահող, որից 4.6 հազար հա-ը պետական և համայնքային սեփականության վարելահողեր են: Չօգտագործվող վարելահողերը հիմնականում գտնվում են բարձրադիր գոտում և ունեն մեծ թեքություններ:

Մարզի վարելահողերի 25.0%-ը (11000 հա), այգիների 19.0 % (210 հա), բնական խոտհարքների 29.0% (2220 հա), արոտների 41.0% (72100հա) համայնքների վարչական տարածքներում գտնվող պետական և համայնքային սեփականության գյուղատնտեսական նշանակության հողեր են: Համայնքների վարչական տարածքների համայնքային սեփականության գյուղատնտեսական նշանակության հողերից 2009թ. օգտագործման համար հողօգտագործողներին վարձակալությամբ հատկացվել է 25100 հա հողամաս: 2008թ. համեմատությամբ վարձակալությամբ տրված հողամասերը ավելացել են 2600հա-ով /հիմնականում արոտավայրեր և այլ հողատեսքեր/:

2009թ. համայնքների տեղական բյուջեներով նախատեսված 276.2 մլն. դրամ /ներառյալ անցած տարիների ապառքներ/ վարձավճարից գանձումները կազմել է 177.8 մլն. դրամ կամ 64.4% /2008թ. 129.3 մլն. դրամ կամ 60%-ի դիմաց/:

Մարզի 14 համայնքներում մարզպետարանի կողմից իրականացվել են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հողային օրենսդրության կատարման

ուսումնասիրություններ և համայնքների ղեկավարներին առկա թերությունները վերացնելու նպատակով տրվել համապատասխան ցուցումներ:

Համայնքների վարչական տարածքներից դուրս, մարզի վարչական տարածքում գտնվող, պետական սեփականության գյուղատնտեսական նշանակության հողերից 2009թ-ի օգտագործման համար վարձակալական հիմունքներով 85 սուբյեկտներին 5-10 տարի ժամկետներով հատկացվել էր 13600հա, որի օգտագործման դիմաց տարեկան հաշվարկվել է 28.5 մլն. դրամ վարձավճար: 2009թ. ֆինանսական տարվա կտրվածքով պայմանագրերով հաշվարկված 24.1 մլն. դրամի դիմաց փաստացի գանձումները կազմել է 23.5մլն. դրամ կամ 98%-ը /2008թ. հավաքագրված 11.8մլն. դրամի դիմաց/: 2009թ-ին 2008թ-ի համեմատ վարձակալությամբ ավել է օգտագործվել 3800հա /հիմնականում արոտավայրեր և այլ հողատեսքեր/:

Համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության 25.3 հա-ի վրա ստեղծվել են հատուկ պահպանվող տարածքներ /«Զանգեզուր» պետական արգելավայր՝ 17.4 հազ.հա, «Արևիկ» ազգային պարկ 7.9 հազ.հա/:

Համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող հողերից դեռևս հնարավոր չէ օգտագործել /սահմանակից է Նախիջևանին/ շուրջ 12.8 հազ. հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Համայնքներում համայնքային սեփականության հողերից օտարվել է 150.8 հա հողամաս, որից 136.29 հա գյուղատնտեսական նշանակության: հողերի օտարումից մուտքերը կազմել են 127.5 մլն. դրամ, այդ թվում քաղաքային համայնքներում՝ 67.9 մլն. դրամ (քաղաքային համայնքները ունեն հաստատված քաղաքաշինական փաստաթղթեր), թվով 12 գյուղական համայնքներում՝ 59.6 մլն. դրամ: Նշված գումարները բավարար չեն գյուղական համայնքների հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների կազմման համար և առաջիկայում լրացուցիչ մուտքերի դեպքում գումարները կուղղվեն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 3-րդ կետով նշված ծախսերի իրականացմանը:

2009թ. կազմվել են համայնքների և համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող հողերի օգտագործման թվով 10 ժամանակավոր սխեմաները և ներկայացվել ՀՀ կառավարության հաստատմանը: Ներկայացված սխեմաներից ՀՀ կառավարության որոշումներով 2009թ հաստատվել է 7-ը: Մերժված հողօգտագործման սխեմաներ չեն եղել:

Հողօգտագործման բնագավառում առկա խնդիրներից են արոտագանգվածները սպասարկող ճանապարհների անմխիթար վիճակը, նախկին ջրարբիացման համակարգերի անգործությունը, արտադրված կաթի անկանոն մթերումը, ինչպես նաև ականապատված տարածքների առկայությունը (մարզի 8 համայնքների վարչական տարածքներում դեռևս մնում է ականապատված 420.0 հա հողատարածք, որից 42 հա՝ մասնավորեցված):

Առողջապահության բնագավառ



Մարզի առողջապահության բնագավառում մարզպետն ապահովել է պետական առողջապահական ծրագրերի իրականացումը, կազմակերպել մարզային ենթակայության առողջապահական հաստատությունների աշխատանքները:

Հաշվետու տարում հատուկ ուշադրության կենտրոնում են եղել մարզում գործող առողջապահական կառույցների համաչափ զարգացման, բնագավառում ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման, առողջության առաջնային պահպանման, մոր և մանկան առողջության, ծննդօգնության մակարդակի, բժշկական օգնության որակի ու մատչելիության բարձրացման հարցերը:

Մարզում գործում են մարզային ենթակայության 19 փակ բաժնետիրական ընկերություններ՝ 6 բժշկական կենտրոններ, 11 առողջության առաջնային պահպանման կենտրոններ, 1 նյարդահոգեբուժական դիսպանսեր և 1 մարզային արյան փոխներարկման կայան: Գյուղական համայնքներում գործում են 101 բուժական մակարձական կետեր:

Մարզային ենթակայության առողջապահական ընկերություններում աշխատում է 1316 մարդ, որից 274 բժիշկ, 704 միջին և կրտսեր բուժաշխատող:

Բուժհաստատությունների կողմից 10000 բնակչի հաշվով սպասարկումն իրականացվում է 18 բժշկով, 32 միջին բուժաշխատողով:

Ստացիոնար բժշկական հաստատություններում ծավալված է 410 մահճակալ Ծնունդների և մահերի թիվը ըստ տարածաշրջանների

Տարածաշրջան	Ծնունդ 2008թ.		Ծնունդ 2009թ.		Մահերի թ. 2008թ.		Մահերի թ. 2009թ.		0-1 տ. երեխաների մահեր 2008թ.	0-1 տ. երեխաների մահեր 2009թ.
	ծննդոգ ցուցաբ ընկեր. տվ.	ՔվԱԳԾ- գրանցված	ծննդոգ ծուցաբ ընկեր. տվ.	ՔվԱԳԾ- գրանցված	ընկեր. տվ.	ՔվԱԳԾ- գրանցված	ընկեր. տվ.	ՔվԱԳԾ- գրանցված		
Կապան	555	521	534	522	435	448	510	449	9	4
Քաջարան	90	95	76	95	79	75		92	2	1
Սիսիան	357	401	392	428	254	260	254	234	1	1
Գորիս	581	575	553	554	317	355	317	389	1	3
Մեղրի	153	170	171	164	124	110	124	131	1	1
ԸՆԴԱՄԵՆԸ ՄԱՐԶՈՒՄ	1736	1762	1726	1763	1218	1248	1205	1295	14	10

Մարզում ծնելիության ցուցանիշը 11.4 պրոմիլե է. մահացության ցուցանիշը կազմել է 8.4 պրոմիլե, բնական աճի ցուցանիշը՝ 3.1 պրոմիլե: Մանկական մահացության ցուցանիշը կազմել 6 պրոմիլե /2008թ-8 պրոմիլե/: Պերինատալ մահացության ցուցանիշը կազմում է 11.9 պրոմիլե / 2008թ-13.1 պրոմիլե/ :

ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված առողջապահական ծրագրերի համաձայն մարզպետի որոշումներով ստեղծվել են բուժսպասարկման որակի վերահսկման, մայրական և պերինատալ մահացության պատճառները, ինունդկամխարգելման աշխատանքներն ուսումնասիրորող հանձնաժողովներ: Շարունակել է գործել տուբերկուլոզի դեմ պայքարի և հակազդեցության մարզային միջգերատեսչական խորհուրդը:

Իրականացվել են առաջնային բուժօգնության որակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ:

Մարզի բնակչության 75,8% գրանցվել են առողջության առաջնային պահպանման բժիշկների մոտ: Շարունակվել է ընտանեկան բժիշկների և բուժքույրերի մասնագիտացման գործընթացը: 2009թ-ի ընթացքում 12 բուժքույր և 13 բժիշկ ուղեգրվել են վերապատրաստման՝ ընտանեկան բժիշկ և ընտանեկան բուժքույր մասնագիտությամբ: Իրականացվել է նաև առաջնային օղակի 17 առողջապահության կազմակերպիչների և 17 հաշվապահների վերապատրաստումը: Մարզպետի անմիջական աջակցությամբ պետական պատվերի շրջանակներում կլինիկական օրդինատուրայի միջոցով մասնագիտացվել են 6 բժիշկ: Մարզի միջին բուժաշխատողների համար կազմակերպվել և իրականացվել են մի շարք առողջապահական կրթական ծրագրեր:

Պոլիկլինիկաներում և առողջության առաջնային պահպանման կենտրոններում (ԱԱՊ) հաճախումների թիվը կազմել է 579955 (2008 թ-ին՝ 430223), պրոֆիլակտիկ

պատվաստումների թիվը՝ 34707 (2008 թ-ին՝ 27195): Հատուկ ուշադրություն է դարձվել ԱԱՊ բժշկների կողմից բնակչության առողջ ապրելակերպի կրթմանն ուղղված աշխատանքներին:

Դիսպանսեր հսկողության տակ գտնվել է 18075 մարդ (2008 թ-ին՝ 17967 մարդ). այդ թվում՝ սիրտ-անոթային հիվանդություններով 2963, էնդոկրին հիվանդություններով 7531, օնկոլոգիական հիվանդություններով 1162, մաշկավեներոլոգիական հիվանդություններով 277, տուբերկուլոզով 317 և հոգեկան շեղումներով 2404 հիվանդներ:

Կազմակերպվել է անվճար և արտոնյալ պայմաններով դեղամիջոցներ ստանալու իրավունք ունեցող անձանց դեղերով ապահովման գործընթացը: Այդ նպատակով ՀՀ առողջապահության նախարարությունից կենտրոնացված գնումների կարգով ստացվել է 43.9 մլն.դրամի դեղորայք (2008թ-48.6 մլն.դրամ), մարդասիրական օգնության կարգով 27.4 մլն. դրամի (2008թ-10.1մլն.դրամ) դեղորայք: Մարզի բուժհաստատությունների կողմից բնակչությանը տրամադրվել է 142.9 մլն դրամի դեղորայք:

2009թ. ընթացքում կազմակերպվել են «Բաց դռների» օրեր, ինչպես մարզի սահմանամերձ տարածաշրջաններում, այնպես էլ ԼՂՀ-ի Քաշաթաղի շրջանում: «Բաց դռների» օրեր միջոցառումների շրջանակներում հետազոտվել և անվճար բուժօգնություն է ստացել 4745 քաղաքացի:

2009թ. ընթացքում պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հիվանդանոցներում և դիսպանսերներում ստացիոնար բուժում է ստացել 7977 հիվանդ (2008թ-ին՝ 8008), մահճակալ օրերի թիվն է 90306: Մահճակալների միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 60,3% (2008թ-ին՝ 51.8%):

Կատարվել է 1525 (2008թ-ին՝2023) վիրահատություն, որից անհետաձգելի՝ 752, պլանային վիրահատություններ՝ 773:

Սոցիալապես անապահով և առանձին խմբերում չընդգրկված 149 քաղաքացիներ մարզպետի միջնորդագրով անվճար հիվանդանոցային բուժօգնություն են ստացել մայրաքաղաքի և մարզային ենթակայության բուժհաստատություններում: Այլ տարածաշրջանների 22 բնակիչների տրամադրվել է ծննդօգնության պետական հավաստագիր, որոնց ծննդօգնությունը կազմակերպվել է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում: Առողջարանային վերականգնողական բուժման են ուղեգրվել 84 քաղաքացիներ:

Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում առողջապահական համակարգի ֆինանսավորման հաստատված ծավալը կազմել է 1393.0 մլն. դրամ (2008թ.-ին 1287.2 մլն.դրամ), ընդունված կատարողականը կազմել է 1393.0մլն դրամ (2008թ.-ին 1287.2 մլն.դրամ), այդ թվում հիվանդանոցային բուժօգնության գծով՝ 608.5 մլն.դրամ, ամբուլատոր-պոլիկլինիկական բուժ.օգնության գծով՝ 784.4 մլն. դրամ :

2009թ-ին վճարովի հիմունքներով ծառայություններից մուտքագրվել է 99.3 մլն. դրամ:

Ուսումնասիրվել են մարզային ենթակայության ընկերությունների ֆինանսատնտեսական և բուժական աշխատանքների իրականացման գործընթացները: Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում առողջապահական համակարգի ֆինանսավորումը իրականացվել է 100 % -ով:

2009թ. ընթացքում աշխատավարձի պարտքեր չեն գոյացվել:

Բուժհաստատությունների նյութատեխնիկական բազայի բարելավման նպատակով մարզային ենթակայության ընկերությունները 2009թ-ին հագեցվել են 79.1 մլն.դրամի նոր բուժարքավորումներով, գործիքներով և պարագաներով: Կենտրոնացված գնումների շրջանակներում մարզի բուժհաստատություններին տրամադրվել է 33.0 մլն.դրամ ընդհանուր գումարի բուժարքավորումներ, բարեգործական, միջազգային կազմակերպությունների և ՀՀ ԱՆ ԾԻԳ-ի կողմից բուժհաստատություններին

տրամադրվել են 34.2 մլն.դրամ ընդհանուր գումարի բուժսարքավորումներ և պարագաներ, սեփական միջոցների հաշվին ձեռք է բերվել 11.0 մլն.դրամի բուժսարքավորումներ: Մարզի բուժհաստատություններում սեփական միջոցների հաշվին իրականացվել են 26.2 մլն դրամի շինարարական-վերանորոգման աշխատանքներ:

2009թ. Գորիս քաղաքում սկսվել է ինվազիվ կարդիոլոգիայի կենտրոնի շինարարությունը (շին-մոնտաժային աշխատանքների ծավալը կկազմի 413 մլն դրամ), որը 2010թ. շահագործումից հետո կհագեցվի արդիական բուժ.սարքավորումներով և գործիքներով, կենտրոնում կներդրվեն նորագույն բժշկական տեխնոլոգիաներ:

ՀՀ առողջապահության նախարարության ԾԻԳ-ի կողմից վարկային ծրագրի շրջանակներում սկսվել են Տեղի առողջության առաջնային պահպանման կենտրոնի շինարարության և Տաթևի առողջության կենտրոնի վերանորոգման աշխատանքները: Կիրականացվի ընդհանուր առմամբ շուրջ 220.000 ԱՄՆ դոլարի ներդրումներ:

2009 թվականից սկսվել են Գորիսի բժշկական կենտրոնի հիվանդանոցի մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքները, ինչպես նաև հիվանդանոցին կից կառուցվում է նոր եռահարկ շինություն: Շինարարական աշխատանքներին ուղղված ներդրումները կկազմեն շուրջ 1.913.000 ԱՄՆ դոլար:

Կիրականացվի նաև բժշկական կենտրոնի հագեցում բժշկական սարքավորումներով և կահույքով, որը կկազմի շուրջ 571.000 ԱՄՆ դոլար:

2009 թ. առողջության առաջնային պահպանման բարեփոխումների ծրագրով ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության ֆինանսավորումով հիմնանորոգվել և կահավորվել են մարզի 26 գյուղական համայնքների բուժ.կետեր և գյուղական ամբուլատորիաներ: Ներդրումները կազմել են 73.3 մլն դրամ



Սոցիալական ապահովության բնագավառ

Հաշվետու ժամանակաշրջանում բնակչության պետական սոցիալական ապահովության տարածքային քաղաքականությունն ապահովվել է սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների գործունեության կազմակերպման, սոցիալական ոլորտի հանրապետական գործադիր մարմինների ենթակայության տարածքային ծառայությունների գործունեության համակարգման, բնակչության սոցիալապես անապահով ընտանիքների հաշվառման, բնակչության զբաղվածության ծրագրերի իրականացման միջոցով:

2009թ-ին նպաստները և կենսաթոշակները վճարվել են առանց ուշացումների: Մարզի կենսաթոշակառուների թիվը կազմել է 25119 մարդ. միջին ամսական թոշակը՝ 27300 դրամ (2008թ-ին՝ 24100 դրամ):

Զբաղվածության չորս տարածքային կենտրոններում գրանցված է 9672 /2008-ին 9072թ/ աշխատանք փնտրող քաղաքացի, որից 7188 /2008թ-ին 6912/ ունի գործազուրկի կարգավիճակ:

2009թ ընթացքում ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված ընտանիքների թվի կտրուկ աճ և նվազեցում չի արձանագրվել: 2009թ հունվար ամսին ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկվել է 4250 ընտանիք 2009թ դեկտեմբերին 4206 ընտանիք:

Ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ գերավճար գումարների հետգանձման ուղղությամբ, որի արդյունքում (կամավոր և դատական կարգով) քաղաքացիներից հետ է գանձվել և պետբյուջե վերադարձվել անօրինական վճարված 984.5 հարյուր դրամ նպաստի գումար:

Սակայն հարկ է նշել, որ 1999թվականից գործողության մեջ դրված ընտանեկան նպաստի համակարգը արմատական բարեփոխումների կարիք ունի:

Տարվա ընթացքում մարզի հաշմանդամները մշտապես գտնվել են ՀՀ Սյունիքի մարզպետի և հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Սյունիքի մարզային հանձնաժողովի ուշադրության կենտրոնում: 84 հաշմանդամների անվճար հատկացվել է առողջարանային ուղեգրեր, 9-ին՝ հաշմանդամության սայլակներ, լուծվել է 241 հաշմանդամների պրոթեզաօրթոպետ պարագաների ձեռք բերման հարցը, իսկ 117 հաշմանդամներ և ծերեր ստացել են լսողական ապրատներ: Նշված պարագաները հաշմանդամները ստացել են տեղում, առանց Երևան մեկնելու:

Մարզպետի օժանդակությամբ՝ «Սյունյաց նախադպրոցականներ» ՀԿ-ն Գորիս քաղաքում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ֆինանսավորմամբ ստեղծել է ցերեկային խնամքի կենտրոն, որում ընդգրկվել են 140 հաշմանդամ և ռիսկային իրավիճակում գտնվող երեխաներ: Կենտրոնի աշխատանքները ուղղվել են հաշմանդամ երեխաների հոգեբանական վիճակի բարելավմանը և աղքատության կրճատմանը, անլիարժեքության բարդույթի և մեկուսացվածության մեղմմանը, որը նպաստում է հաշմանդամների ինտեգրմանը հասարակությանը:

2009 թվականի պետական բյուջեի այլ ընթացիկ դրամաշնորհներ հոդվածով ՀՀ Սյունիքի մարզպետարանին հատկացված 20 մլն դրամը ամբողջությամբ ուղղվել է դրամական օգնության խնդրանքով, մարզպետին դիմած քաղաքացիների դիմումների բավարարմանը: Նշված դիմումները մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների կողմից ուսումնասիրվել է, կազմվել սոցիալական վիճակը բնութագրող համառոտ նկարագիր և ներկայացվել մարզպետարանի քաղաքացիների սոցիալական վիճակը ուսումնասիրող հանձնաժողովին: Հանձնաժողովի կողմից քննարկված 767 դիմումներից բավարարվել է 686-ը, որոնց տրվել է 20-50 հազարական դրամ օգնություն:

2009 թվականի պետական բյուջեյով մարզպետարանի հատկացվել է 96344 հազար դրամ՝ «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրեր իրականացնելու համար:

Զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի կողմից հաստատվել է 70 ծրագիր. որից 25-ը մարզի քաղաքային, 45-ը գյուղական համայնքներում, որոնցում ընդգրկված էին 1053 գործազուրկ և աշխատանք փնտրող:

«Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրերի համար մարզին հատկացված 96344 հազար դրամից իրացվել է 93454 հազար դրամը:

«Առաքելություն Հայաստան» հասարակական բարեգործական կազմակերպության ֆինանսավորմամբ մարզում գործում է 3 բարեգործական ճաշարան, որտեղ 296 հոգի օրական մեկ անգամ ստանում են տաք սնունդ: Արժևանիկ գյուղում գտնվող տարեցների սպասարկման կենտրոնում խնամվում են 10 շահառուներ:

Սոցիալական ոլորտում որպես կարևորագույն խնդիր եղել և մնում է նոր աշխատատեղերի ստեղծումը, ինչպես նաև հանրապետական միջինից բարձր գործազրկության առկա մակարդակը:

Երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառ

Մարզում համակարգված աշխատանքներ են իրականացվել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և ընտանիքի, կանանց, երեխաների իրավունքների և նրանց սոցիալական պաշտպանությանն ուղղված պետական նպատակային ծրագրերի կատարման ապահովման ուղղությամբ:

Ոլորտի հարաբերությունները կարգավորող համապատասխան իրավական ակտերի վերաբերյալ կազմվել են շրջաբերականներ և ուղարկվել մարզի բոլոր համայնքներ:

Մարզում հաշվառված են երկկողմանի ծնողազուրկ 42 երեխաներ: Հինգ երեխաներ տեղավորվել են հատուկ տիպի մանկատներում: Որպես որդեգրողի

թեկնածուներ հաշվառվել են 10 անձ: Որդեգրման ենթակա երեխաների թիվը 3 է, որից 2-ը որդեգրվել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 213 երեխայի տրվել է վկայագիր մարզի հատուկ դպրոցներում սովորելու համար. իսկ 7 երեխայի վկայագիր տրամադրվել է ներառական կրթություն սանալու համար:

Միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ 200 երեխա ընդգրկվել են Հայ օգնության ֆոնդի երեխաների հովանավորչական ծրագրում, որի շրջանակներում տարվա մեջ երկու անգամ ֆինանսական օգնություն է տրամադրվում նշված ընտանիքներին:

Նույն ծրագրում ընդգրկված 50 երեխայի ամառային համգիստը կազմակերպվել է «Սիրանույշ» մանկապատանեկան ճամբարում:

Ֆինանսական օժանդակություն է տրամադրվել 6 և ավելի երեխաներ ունեցող 40 ընտանիքի, ինչպես նաև դժվար իրավիճակներում հայտնված 35 երեխայի ընտանիքների:

Սոցիալապես անապահով ընտանիքների 91 երեխա հաճախում է Կապանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն:

Աշխատանք է տարվել ծննդյան վկայական չունեցող երեխաների հայտնաբերման և նրանց օժանդակելու ուղղությամբ, որի արդյունքում 14 երեխաների ծննդյան վկայականներ են վերականգնվել:

Ոստիկանության անչափահասների գործերով զբաղվող ծառայությունների հետ համատեղ կազմվել է մուրացիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասների տվյալների շտեմարան:

Մարզում մուրացիկ երեխա հաշվառված չէ ,բայց կան հաշվառված 10 իրավախախտ երեխա, որոնց հետ ամենամսյա պրոֆիլակտիկ աշխատանքներ են կազմակերպվում:

Մարզում իրավապաշտպան կազմակերպությունների աջակցությամբ իրականացվել է «Բռնությունից երեխայի պաշտպանության իրավունքը հատուկ դպրոցներում» մոնիթորինգը, որի արդյունքները քննարկվել են մարզպետարանում կայացած խորհրդակցության ժամանակ, հատուկ դպրոցների տնօրենների մասնակցությամբ:

Մարզի համայնքներում կազմակերպվել են բազմաբովանդակ միջոցառումներ՝ նվիրված երեխաների պաշտպանության միջազգային օրվան:

Միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ կազմակերպվել է ամառային ճամբար մարզի սոցիալապես անապահով 200 երեխայի համար, վերապատրաստման դասընթացների է մասնակցել երեխաների պաշտպանության հարցերով զբաղվող 80 մասնագետ:

UNICEF-ֆինանսավորմամբ Գորիս համայնքում շարունակվել է գործել երեխաների խնամքի ցերեկային կենտրոնը, որտեղ տարբեր տեսակի ծառայություններից օգտվում է 100 երեխա:

Կազմակերպվել է 2 համաժողով, որին մասնակցել են երեխաների հարցերով զբաղվող կառույցների ներկայացուցիչներ, քննարկվել է երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի բարեփոխմանն ուղղված հարցեր:

Շարունակվել է համագործակցությունը մարզում գործող երեխաների և կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ:

Կրթության բնագավառ



2009 թվականի ընթացքում համակարգված աշխատանքներ են տարվել մարզպետարանի ենթակայության պետական ուսումնական հաստատությունների գործունեության բարելավման, կառավարման արդյունավետության բարձրացման, պետական ուսումնական ծրագրերի իրականացման, կրթական չափորոշիչների կիրառման, կրթության որակի ապահովման ուղղություններով:

Հունվարին կազմակերպվել են մարզի հանրակրթական 121 դպրոցների 2009-2010 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի տարիֆիկացիաների ուսումնասիրություն և վերջնական արդյունքների քննարկում:

Վերահսկողություն է իրականացվել սահմանված կարգի համաձայն ուսուցիչներին դասաժամերով ծանրաբեռնելու, դասարանների կոմպլեկտավորումների, դպրոցների կողմից ֆինանսական և նյութական միջոցների նպատակային ու արդյունավետ օգտագործման նկատմամբ, տարիֆիկացիաների, դպրոցական ուսումնական պլանների կազմման, դպրոցական պարտադիր ժամաքանակների բաշխման, հաստիքների սահմանման և ֆինանսների օպտիմալ օգտագործման նկատմամբ:

Հաշվետու ժամանակամիջոցում աջակցություն է ցուցաբերվել մարզի հանրակրթական դպրոցներին դասագրքերի, ծրագրերի, ուսուցչի ձեռնարկների ձեռքբերման, մեթոդիկավորումների և մանկխորհուրդների գործունեության կազմակերպման, դպրոցների կառավարման համակարգի կայացման գործընթացներում՝ մասնավորապես դպրոցների տնօրենների ընտրությունների կազմակերպման, 11-րդ դասարանցիների համար զորամասերում ռազմաուսումնական գործնական պարապմունքների, շրջանավարտների մասնագիտական կողմնորոշման և այլ աշխատանքներում:

Համակարգվել և վերահսկվել է դպրոցական տարիքի երեխաների հաշվառումն, ըստ սահմանված կարգի, ապահովվել է 16383 աշակերտների ընդգրկումը հանրակրթական ուսումնական հաստատություններ. տնային ուսուցում է կազմակերպվել մարզի 3 դպրոցներում, մարզում պարտուսից դուրս մնացած աշակերտներ չկան:

Մարզի լավագույն 63 աշակերտներ մարտի 21-ից մինչև մայիսի 5-ը մասնակցել են առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլին, արժանացել 11 դիպլոմների և 14 գովասանագրերի, ինչը նախորդ տարվա համեմատ ավելի բարձր ցուցանիշ է, իսկ ՀՊԾՀ Կապանի հենակետային վարժարանի 11-րդ դասարանի մի աշակերտուհի «Կենսաբանություն» առարկայից գրավելով առաջին տեղը իրավունք ստացավ մասնակցելու ճապոնիայում կայանալիք միջազգային օլիմպիադային:

2009 թվականին «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ» և «Տարվա լավագույն դաստիարակ» հանրապետական մրցույթում մարզային փուլի հաղթողներ՝ Գորիսի թիվ 3 միջնակարգ դպրոցի տնօրենը և Կապանի թիվ 1 միջնակարգ դպրոցի տարրական ուսուցման ուսուցչուհի արժանացել են հանրապետական պատվոգրերի, իսկ «Տարվա լավագույն դաստիարակ» կոչմանն է արժանացել Կապանի թիվ 6 նախակրթարանի դաստիարակը, որը ՀՀ վարչապետի կողմից, որպես պարգև ստացավ 2107 մակնիշի «Ժիգուլի» ավտոմեքենա:

Հայ առաքելական եկեղեցու և ՀՀ ԿԳ նախարարության կողմից համատեղ կազմակերպված հանրապետական առարկայական (հայոց եկեղեցու պատմություն, հայոց լեզու և գրականություն, հայոց պատմություն և բնագիտական՝ ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն) մրցույթներում Կապանի թիվ 7, թիվ 13 և Գորիսի թիվ 5 միջնակարգ դպրոցների 4 ուսուցիչներ արժանացել են դրամական խրախուսանքի և դիպլոմների:

Հուլիս ամսվա ընթացքում 2 հերթափոխով 140 դպրոցականների ամառային հանգիստը կազմակերպվել է Կոտայքի մարզի Հանքավանի «Լուսաբաց» և «Հասմիկ» մանկական առողջարարական ճամբարներում:

Հետևողական աշխատանք է տարվել ավարտական դասարանների «Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն» առարկայի

պետական ուսումնական ծրագրերով նախատեսված դաշտային պարապմունքները շեֆ զորամասերի և տարածքային զինկոմիսարիատների հետ համատեղ կազմակերպելու ուղղությամբ: Մարզի 31 դպրոցների հատկացվել է ուսումնական գեներ:

Մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների 2396 մանկավարժներ մեկ կամ մեկից ավելի թեմատիկ ուղղվածությամբ վերապատրաստման դասընթացներ են անցել մարզի 4 դպրոց կենտրոններում և ԿԱԻ Կապանի և Գորիսի մասնաճյուղերում: Մարզի 3 ավագ դպրոցների 71 մանկավարժներ 2 փուլով վերապատրաստման դասընթացներ են անցել Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանում:

Վերահսկվել է մարզում գործող 50 նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից ՀՀ կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը, ՀՀ ԿԳՆ կողմից հաստատված պետական համալիր ծրագրի պահանջների իրականացումը նախակրթարաններում երեխաների տարրական ընդհանուր կրթությանը նախապատրաստելու նպատակով:

2009 թվականի ընթացքում մարզային ենթակայության 4 դպրոցներում (Սիսիանի թիվ 3, Գորիսի թիվ 3, Կապանի թիվ 1 և Մեղրիի թիվ 2) կազմակերպվել է ներառական փորձարարական ծրագրի ներդրումը: Երևանի բժշկահոգեբանամանկավարժական զնահատման կենտրոնի կողմից արդեն գնահատվել է 92 երեխայի կրթական կարիքը: Մարզում հաշվառվել է նախադպրոցական տարիքի 9949 երեխա:

Ընդհանուր առմամբ ՀՀ Սյունիքի մարզի դպրոցները 2009 թվականի ընթացքում ստացել են 71912 կտոր դասագիրք, ուսուցչի ձեռնարկներ, մեթոդական գրականություն, 2150 հատ տարրական դպրոցի համար նախատեսված դիդակտիկ պաստառներ, ՀՀ շախմատի ֆեդերացիայի կողմից 142 հատ շախմատի խաղատախտակներ և դրանց համապատասխան քանակով խաղաքարեր: «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից Կապան քաղաքի 8 և Գորիսի տարածաշրջանի 5 դպրոցների տրամադրվել է բնագիտական առարկաների լաբորատոր սարքավորումներ: ՀՀ նախագահի և մոսկվայաբնակ բարերարի աջակցությամբ ամբողջովին թարմացվել է Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցի ուսումնանյութական բազան:

Աջակցություն է ցուցաբերվել կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնին (ԿՏԱԿ) մարզի՝ անկախ ուսումնական հաստատությունների պետաիրավական ձևից և ենթակայությունից տարեկան գործունեության մասին վարչական վիճակագրական հաշվետվությունների հավաքագրման, դրանք Access ծրագրով համակարգչային մուտքագրման և համապատասխան բազա ստեղծելու, ինչպես նաև շարժական ինտերնետային համակարգչային կայանի (ՇԻՀԿ) շահագործման հարցերում: 2009 թվականի ընթացքում ՇԻՀԿ-ը 1 ամսյա դասընթացներ է կազմակերպել ՀՀ Սյունիքի մարզի Վաղատուրի, Դարբասի և Հացավանի դպրոցներում:

Ոլորտում որպես հիմնախնդիրներ են մնում հանրակրթական ուսումնական հաստատությունների հիմնանորոգման և նյութատեխնիկական բազայի նորացման խնդիրները:

Մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բնագավառ



Մարզպետարանի գործունեությունը նպատակաուղղված է եղել մարզում պետական մշակութային քաղաքականության իրականացմանը, մշակույթի դերի բարձրացմանը, մշակութային ժառանգության պահպանությանը, պետական, ազգային ու այլ տոների, զանգվածային միջոցառումների կազմակերպմանը, ավանդական, ազգային ծեսերի վերականգնմանն ու տարածմանը, թանգարանների ու գրադարանների գործունեության ապահովմանը, կադրային քաղաքականության և

մշակութային կրթության զարգացմանը, մարզական կյանքի բարելավմանն ու զարգացմանը, երիտասարդության հետ տարվող աշխատանքների աջակցմանն ու ակտիվացմանը:

Մարզում գործում են 2 դրամատիկական թատրոն, 6 թանգարան, 130 գրադարան, 15 երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ, 7 մշակութային կենտրոն, 110 մշակույթի տուն և ակումբ, 7 մարզադպրոց, 6 մարզադաշտ և այլ մարզական կառույցներ ու մշակութային օջախներ:

Տարվա ընթացքում մարզի համայնքներում պատշաճ մակարդակով նշվել են ազգային, պետական տոները, հորելյանները, տարելիցները: Մարզում կազմակերպվել և անց են կացվել բազմաբնույթ մշակութային և սպորտային միջոցառումներ, երիտասարդական հավաքներ, փառատոններ, ցուցահանդեսներ, տոնախմբություններ, գիտաժողովներ, համերգային ծրագրեր:

Մարզպետարանի և մշակույթի նախարարության հետ համատեղ կազմակերպվել են «Արմոնո» թատերական միջազգային փառատոնը, «Երգող Հայաստան» մանկապատանեկան երգչախմբերի հանրապետական չորրորդ, Կոմիտասի ծննդյան 140-ամյակին նվիրված երաժշտական և արվեստի դպրոցների «Սյունիք» մանկապատանեկան, անկախության 18-րդ տարեդարձին նվիրված մարզամշակութային, «Պատարագ երեխաների շուրթերով», Մետաքսյա Սիմոնյանի անվան ասմունքի հանրապետական փառատոնները:

Ազարակ քաղաքի 60-ամյակին նվիրված կազմակերպվել են տոնախմբություններ, համերգներ, փառատոններ, ցուցահանդեսներ, սպորտային միջոցառումներ:

2009թ. մայիսի 8-ին և 9-ին մարզի բոլոր համայնքներում կազմակերպվել են զանգվածային միջոցառումներ՝ նվիրված Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի 64-րդ ու Շուշիի ազատագրման 17-րդ տարեդարձներին:

Մարզի մշակույթի օջախներում, ակումբ-գրադարաններում, ուսումնական հաստատություններում մեծ շուքով նշվել են Ակսել Բակունցի ծննդյան 110, Կոմիտասի 140, Արամ Մանուկյանի 130, Խաչատուր Աբովյանի 200, Մետաքսյա Սիմոնյանի 80-ամյակները, կազմակերպվել տարբեր գիտաժողովներ:

Երիտասարդության հետ տարվող աշխատանքները ակտիվացնելու նպատակով մարզում անց են կացվել «Սյունիք-2009 ուսանողական ամառ», «Գորիսյան օրեր», «Սյունիքի մշակութային օրեր Լեռնային Ղարաբաղում», «Արևիք-Մեղրի», «Վերջին զանգ» տոնակատարությունները, կազմակերպվել մարզամշակութային տարբեր փառատոններ, ցուցահանդեսներ ու մրցումներ:

Մարզում կազմակերպվել և անց են կացվել մարզի նկարիչների, Գերմանիայի Դաշնային հանրապետության դեսպանության հետ համատեղ Հորսթ Յանսենի նկարների, Թորոս Իսրայելյանին նվիրված «Հայաստանի ճարտարապետությունը», «Մշակութային ժառանգություն» խորագրերով, աշխատանքի, բերքի տոնի ցուցահանդեսներ:

«Մենք ուխտ ունենք միշտ դեպի լույս» խորագրով միջոցառումների շրջանակներում կազմակերպվել են ուխտագնացություններ Հայաստանի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պատմամշակութային հուշարձաններ ու վանքեր: Նշված միջոցառումների շրջանակում մկրտվել են շուրջ 300 պատանիներ ու աղջիկներ: Դավիթբեկ, ճակատեն գյուղերում կառուցվել են մատուռներ: Կապան քաղաքում իրականացվել է «Մենք հայ ենք, մենք երիտասարդ ենք, մենք ուժեղ ենք» խորագրով երիտասարդական ծրագիրը, որին իրենց մասնակցությունն են բերել Հայաստանի տարբեր ԲՈՒՀ-երի ուսանողներն ու մշակութային խմբերը: Զանգվածային միջոցառումներ են անցկացվել նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության օրվան, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին, Սարգսրապատի հերոսամարտին, երկրաշարժի զոհերի հիշատակին, Կանանց միջազգային օրվան, Հայաստանի առաջին հանրապետության, Հայոց ազգային բանակի օրվան: Առանձնահատուկ շուքով են նշվել Ամանորի և Սուրբ Ծննդյան միջոցառումներն ու տոնախմբությունները: Մարզի համայնքներում իրենց ծրագրերով հանդես են եկել համերգային կոլեկտիվներ, թատերական խմբեր ու անհատ կատարողներ:

Կազմակերպվել են Ակսել Բակունցի «Ժողովածուների ընտրանի», Դ. Գասպարյանի «Ակսել Բակունց», Ղևոնդ Ալիշանի «Սիսական» գրքերի հրատարակություններն ու շնորհանդեսները: Թողարկման է պատրաստվում 20-րդ դարի գուսանական արվեստի անգլագական վարպետ Գուսան Աշոտի երգերի ձայնասկավառակը:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացման, բնակչության ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայականացման նպատակով 2009թ. մարզում անց են կացվել ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք», «Լավագույն մարզական համայնք» ստուգատեսները, անկախության 18-րդ տարեդարձին նվիրված «ՀՀ Սյունիքի մարզպետի գավաթի համար» ֆուտբոլի մանկապատանեկան առաջնություն, օլիմպիական օրվան նվիրված մրցումներ, մարզային փառատոններ, առաջնություններ ու հուշամրցաշարեր:

Մարզամշակութային միջոցառումները կազմակերպվել և անց են կացվել «Պետական աջակցություն մշակութային միջոցառումների իրականացմանը» ծրագրով մարզպետարանին հատկացված 7171,7 հազար դրամ միջոցներով:

Անհրաժեշտ աշխատանքներ են տարվել պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման ուղղությամբ:

Պետական բյուջեի միջոցներով և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ վերանորոգվել են մարզի մի շարք քաղաքային և գյուղական համայնքների ակունք-գրադարաններ, սպորտդահլիճներ, ստեղծվել խաղահրապարակներ: Վերանորոգվել ու շահագործման են հանձնվել Տեղ գյուղի մշակույթի պալատը, Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոնին հատկացված շենքը:

Մշակույթի և սպորտի բնագավառում դեռևս չլուծված են մնում գյուղական համայնքների մշակույթի տների, ակունք-գրադարանների, մարզական կառույցների վերանորոգման և համապատասխան գույքով ապահովման հարցերը:

Առևտրի, հասարակական սննդի եւ սպասարկման բնագավառ

Այս բնագավառում մարզպետն իր լիազորություններն իրականացրել է մարզպետարանի ու հանրապետական գործադիր մարմինների համապատասխան տարածքային ծառայությունների գործունեության համակարգման միջոցով:

2009 թվականին Սյունիքի մարզի սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառությունը՝ նախնական տվյալներով (ընթացիկ գներով) կազմել է 10.3 մլրդ դրամ, ընդ որում առևտրաշրջանառության գերակշռող մասը՝ 6.1 մլրդ. դրամ կամ 59.0%-ը ձևավորվել է խանութների և կրպակների միջոցով:

«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում ստուգման արդյունքների վերաբերյալ ՀՀ Սյունիքի մարզպետարանին ներկայացված եռամսյակային հաշվետվությունների ամփոփ տվյալներով, մանրածախ առևտրով զբաղվող գործող օբյեկտների թիվը մարզում կազմում է ավելի քան 1020 միավոր, (Կապանի տարածաշրջանում՝ 475, Գորիսի տարածաշրջանում՝ 245, Սիսիանի տարածաշրջանում՝ 204, Մեղրիի տարածաշրջանում՝ 91): Հանրային սննդի օբյեկտների թիվը մարզում հասնում է 100-ի, որից 42-ը՝ Կապանի, 26-ը՝ Գորիսի, 15-ը՝ Սիսիանի և 17-ը՝ Մեղրու տարածաշրջաններում: Մարզում առկա են ավելի քան 120 կենցաղային ծառայությունների օբյեկտներ, որոնցից 48-ը՝ Կապանի, 25-ը՝ Գորիսի, 27-ը՝ Սիսիանի և 20-ը՝ Մեղրիի տարածաշրջաններում:

